

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ
(1912—1914) ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Յոթնասունական թվականների կեսերին հայտնի դարձավ, որ Գրիգոր Զոհրապը (1861—1915) պահել է օրագրություններ՝ Դատելով մասնակի հրապարակումներից, դրանք վերաբերել են առաջին համաշխարհային պատերազմին¹։ Նման տպավորությունն ավելի է ամրապնդվում Գոհար Ազնավուրյանի հաղորդմամբ։ Պատմելով իր իսկ ջանքերով հայթաթված Զոհրապի արխիվային նոր նյութերի մասին, բանասերը նշել է. «Ստացված նյութերի մեջ կարևոր տեղ էին զբաղում նաև Եղեռնի ժանր օրերին հայ անվանի մտավորականների ձերբակալության առթիվ գրված օրագրային առանձին թերթիկներ, որոնք շատ կարևոր հարցեր են շոշափում՝ կապված թուրքական կառավարության շարամիտ և ոճրագործ դավերի հետ»²։ Անմիջապես ասենք, որ այդ կարծիքը հիմնադրվել է Բայց մինչ այդ ուզում ենք կատարել մի անհրաժեշտ ճշգրտում։ Գ. Ազնավուրյանը պնդում է նաև, որ Զոհրապն է հեղինակը ֆրանսերեն անստորագիր մի նոթատետրի, որ լուսանկար է թյուրիմացարար Վերազրվել է Երիտիև որը ամփոփում է 1900-ի մայիսի 11-ից մինչև օգոստոսի 24-ը Եվրոպա կատարած նրա ճանապարհորդական գրառումները³։ Չմտնելով բանասիրական մանրուքների մեջ, հավաստենք միայն, որ Զոհրապը 1900-ին ընդհանրապես արտասահմանում չի եղել, մնացել է Կ. Պոլսում, իսկ նշված ամիսներին նվիրատվություն է արել Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցին, գրել նորավեպ ու նամակ։

Դանք Բուն օրագրություններին։

Իր գրառումները Զոհրապը կատարել է Բերայի ակումբի, Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի գրողակիր, աշակերտական տետրի կամ սովորական որևէ թղթի վրա։ Անկախ այն բանից, մեկրառանի նշում են դրանք, թե ծավալուն, մի քանի էջանոց հանգամանալի նոթեր, առանց բացառության բոլորն էլ փառափառված են, արձանագրում են օրվա կարևորագույն անցքերը, որոնք տեղի են ունեցել իր մասնակցությամբ և այդ պատճառով էլ ուղեկցվում են անփառված գնահատումներով ու վերլուծումներով։ Եթե փորձենք որոշել պահպանված ավելի քան յոթ տասնյակ գրառումների ժամանակագրական սահմանները, ապա կստացվի առաջին հայացքից տարօրինակ պատկեր։ Որպես կանոն առաջին համաշխարհային պատերազմի ամիսներին գրառած նոթերում, 1914-ի օգոստոսի 3/16-ից մինչև 1915-ի մայիսի 9-ը (նոր տոմարով), Զոհրապը ամենայն բարեխղճությամբ ցույց է տվել տարին, ամսաթիվը, հին ու նոր տոմարը, շաբաթվա օրվա անվանումները և անգամ ժամը։ Իսկ ահա մնացած յոթ գրառումներում, մեկ-երկու բացառությամբ, խախտել է այդ սկզբունքը կամ ոչինչ չնշելով, կամ էլ անելով հանելուկային թվացող հիշատակումներ՝ չափազանց զիջելով, 13, երեքշաբթի նիստը, քաղցնեռան ըսվելիք և այլն։ Ինչպես կտեսնենք, այս և ընդհանրապես 1914-ի օգոստոսի 3/16-ից առաջ գրի առած բոլոր նշումներն ու նոթերը վերաբերում են Հայկական բանտրոգումներին։

Քաջ հայտնի է, որ Բարենտրոգումների մասին տպագրված աշխատություններում, հուշեքում ու վավերագրերում մշտապես հուշվել է Զոհրապի անունը, նշվել են նրա ծառայությունները։ Զիշտ չէր լինի, սակայն, Զոհրապի օրագրություններում որոնել ոչ միայն Բարենտրոգումների, այլև սեփական գործունեության անշուշտ բոլոր հարցերի լուսաբանումները։ Ենթադրաբար գրառումներից առաջինը Զոհրապը կատարել է 1912-ի դեկտեմբերի 9-ին։ Զրադումների կամ այլ պատճառներով ընդհատել է դրանք և վերսկսել միայն 1913-ի դեկ-

¹ Տե՛ս Ընտիրի, շաբաթաթերթ, Պոլսում, 1975, № 45—50, էջ 2—6։ Պարբերականը «Զոհրապի օրագիրը Եղեռնի նախօրյակին» ընդհանուր խորագրի տակ տպագրել է 12 գրառում։

² Բաները Երևանի համալսարանի, 1977, № 3, էջ 179։

³ Նույն տեղում, էջ 179—180։

տեմերի վերջին օրերին, բայց եսին թվով թանիցս վերադարձել է նախընթաց իրողություններին և արել հենց այն հիշատակումները, որոնց մասին խոսվեց վերը: Բնականաբար դրանք լիովին հասկանալի լին իրեն, բայց կարող են առեղծվածներ առթել հետազոտողներին (այդ պատճառով էլ կարծվել է, թե ճշդեռնի ծանր օրերին դրած օրագրությունից թերի էշերա են): Այդ կարգի գրառումները պարունակում են շահագրգիռ հետաքրքիր փաստեր Իթթիհատի պարագլուխների, ուստի վիճակագրության հետ ունեցած ԶՆՐԱԿԻ հանդիպումների, Ապահովության հանձնաժողովի (ստեղծվել է Ազգային ժողովի 1912-ի դեկտեմբերի 21-ի դեմիակ նիստի որոշմամբ՝ նպատակ դնելով թրքահայ թաղաքական դատի հետապնդումը, վեց վիճակների հետ ինքնավարություն՝ ավարակալան պետություններու իրավական երաշխիքներով) նիստերին և այլուայլ խորհրդակցություններին իր մասնակցության վերաբերյալ: Թվում է, թե նման տվյալների օգնությամբ հնարավոր կլիներ վերականգնել դեպքերի ժամանակագրությունը, բայց այստեղ էլ առկա է մեկ ուրիշ բարդություն: Բանն այն է, որ Բարենորգումների շուրջ տարվող բանակցությունները սկզբնապես չեն կրել պաշտոնական բնույթ և թե՛ ԶՆՐԱԿԻ, թե՛ մյուս հայ գործիչների ձեռնարկումները շանում էին գաղտնի պահել ոչ միայն թուրքական իշխանություններից, այլև հասարակականությունից, թեև առանձին տեղեկություններ սպրդում էին թերթերի էջերը: Ինչ վերաբերում է ժամանակակիցների՝ հետագայում գրած հուշերին, ապա դրանցում շատ բան մոռացված կամ զանց է առնված: Այսպիսի պարագաներում մնում է ապավինել ԶՆՐԱԿԻ օրագրություններում եղած ակնարկումներին, կողմնակի հուշարկումներին, և արխիվային սակավաթիվ նյութերին: Նման մոտեցումը տվեց ցանկալի արդյունք: Չթվագրված ու թխորհրդավոր գրառումների վերծանումը պարզեց, որ դրանք արտացոլում են 1913-ի դեկտեմբերի դեպքերը, երբ Բարենորգումների խնդիրը թևակոխել էր իր եզրափակիչ և շատ կոդմերով դրամատիկ փուլը:

Ինքնին հասկանալի է, որ ԶՆՐԱԿԻ հայտնած կարծիքները, առանձին երևույթներին ու գործիչներին տված նրա գնահատականները անվիճարկելի չեն: Հայտնի է, որ նա մասնավոր համակրանքով է վերաբերվել դաշնակցությանը, սակայն գրառումներում երբեմն, հատկապես իր դեմ նյութված «զավաղորության» կապակցությամբ, թույլ է տվել ծայրահեղ, անդամանաբան արտահայտություններ: Անկախ դրանցից, աներկմտորեն կարելի է պնդել, որ հրապարակվող օրագրությունները եզակիորեն արժեքավոր վավերագրեր են, քանի որ ոչ միայն բովանդակում են ուղադրավ ու անծանոթ փաստեր, շահեկան տեղեկություններ, այլև լուսարարանում են մի շարք կենդան խնդիրներ, որոնք ըստ էության չեն գրավել ուսումնասիրողների ուշադրությունը:

Բնագրագիտական մի նկատում ևս: ԶՆՐԱԿԻ, իր իսկ վկայությամբ, ժամանակին թգեղագրության դասերին պետք եղածին շափա չի հետևել և առհասարակ աթի չի ընկել վայելչագրությամբ: Իսկ մասնավոր Բարենորգումների մասին օրագրումները թղթին է հանձնել հոգեկան հուզումների, նյարդային պայմաններում, գրեթե անընթեռնելի ձեռագրով: Ընթերցողին թողնելով պատկերացնելու նման ձեռագրի վերծանման դժվարությունները, ուզում ենք նրա ուղադրությունը հրավիրել մի հանգամանքի վրա: Գրառումների բնույթը բերում է այն հետևություն, որ ԶՆՐԱԿԻ մտադրություն է ունեցել հետագայում անդրադառնալ դրանց: Սրանով պետք է բացատրել նաև, որ օրագրությունները շատ հաճախ հիշեցնում են ուրվագրումներ ու նշումներ: Կարևորելով այս կամ այն իրողությունը, նա միևնույն փաստը արձանագրել է մի քանի անգամ, ինչը բերել է անխուսափելի կրկնությունների: Ուշագիր լինելու դեպքում կարելի է սակայն համոզվել, ամեն մի նոր գրառմամբ ավելի վաղ ասվածին կատարել է որևէ շահեկան հավելում, տվել էական մի մանրամասնություն: Ահա ինչու նպատակահարմար գտանք, մեկ-երկու բացառությամբ, տպագրել բոլոր օրագրումները՝ որոշ դեպքերում շեղվելով հրապարակման ավանդական եղանակից և բնագրերն ուղեկցել ոչ միայն ծանոթագրություններով, այլև առհարկի բացատրություններով (կտրվեն այլ տառատեսակով): Առանձին բառեր, որոնք հնարավոր չի եղել կարգալ, ցույց են տրվում ա. <անընթեռնելի> նշումով: Բնագրերը հրապարակվում են առաջին անգամ, ԳԱԹ-ի ԶՆՐԱԿԻ ֆոնդում պահվող № 17 ինքնագրերից, որոնց էջերը նշվում են վերջում, փակագծերի մեջ:

Ենթահավելություն ենք հայտնում ԳԱԹ-ի աշխատակից Արուսյակ Բոյաշյանին ֆրանսերեն բառերը վերծանելու համար:

Բաճախի. դիմ. ղեկավար Ա. Ս. ՇԱՐՈՒԲՅԱՆ.

<ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ>

<1.> 9 ԴԵԿ. 1912, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԱՌՏՈՒ

Այս առտու բժիշկ Ջավրիեֆը¹ տունս եկավ: Մուշե վերադարձ, վերադարձ առաքելութենե մը, որ մարտիրոսության չի հանգեցավ բարեբախտաբար:

Պայծառ դեմք, պայծառ խղճմտանք, սղեբրեկ մազ և մորուք. գորշ հագուստներ, հեզահամրույր ու ամեն կերպով պատկառելի ու համակրելի անձնավորություն: Երեք տարի կա, որ ճանչցա զինքը: Ինքը առաջինը եղավ իմ ճանչցած դաշնակցականներուն մեջ ընդունելու սա ճշմարտությունը, որ հայությունը բնաշինչ ըլլալի ուրիշ ապագա չի կրնար ունենալ թուրք կառավարության մը տակ: Ու հայության համար սրգողած Ռուսիո հետ միակ դրացի և քրիստոնյա հզոր պետությունը ամենածանր սխալ մըն է: Հետո քիչ քիչ, ժամանակով ու դեպքերի ստիպմամբ ուրիշ դաշնակցականներ ալ մոտեցան մեր գաղափարներուն: Ակնունին² վերջինը եղավ խորթացողը իր քրքասեր երազներին:

Պ. Ջարիքովի³ քով իմ դիմումներես առաջ բառնալու համար թյուրիմացությունները ու կասկածներն հայ ժողովուրդին և ռուս կառավարության և ժողովուրդին մեջ, նույն միտքով երկու կարևոր տեսակցություններ ունեցած էի արդեն Տումայի նախագահ և Հոկտեմբերին պետ պ. Կուլքովի⁴ հետ՝ անոր երկու հեղ Պոլիս այցելությանը առթիվ: Առաջին տեսակցությանը մեզի դեմ անհաշտ այս կարևոր անձնավորությունը իմ բացատրություններին հետո ավելի մեղմացած, հայոց հանդեպ զրեթե համակրած գտա երկրորդ տեսակցությանս միջոցին: Առաջին տեսակցության միջոցին այն նույն կասկածը և գաղափարը հայտնած էր արդեն հայոց մասին, ինչ որ թուրք պետական մարդիկ և Ապտյուլ Համիտ ինքը հայտնած էր թուրքահայոց մասին.

— Ռուսահայերը «պելլիք»⁵ կուզեն,— ըսավ պ. Կուլքով:

Այս թուրքերեն բառը ռուս անձնավորության բերնին մեջ նշանակալից էր և միտքս մնաց:

Պ. Կուլքովի հայկական կյանքը բացատրեցի մանրամասն թե ռուսահայոց և թե թուրքահայոց: Առաջիններուն մասին պետք եղած փաստերը հայթայթած էր ինձի պ. Ջավարյան⁶, դաշնակցական ամենալուրջ պետներեն մին: Ան ալ կանուխեն ինձի գաղափարակից է հայ ու ռուսական մերձեցման (էջ 1—2):

¹ Ջավրիե (Ջավրյան) Հակոբ (?—1920)—Պետերբուրգի զինվորական բժշկական ակադեմիայի շրջանավարտ:

² Ակնունի է. (Մալումյան Խաչատուր, 1863—1915)—հրապարակագիր:

³ Ջարիկով Ն. Վ. (1855—?)—1909—1912-ին Ռուսաստանի դեսպան Կ. Պոլսում:

⁴ Գուլկով Ա. Ի. (1862—1936)—Օկտյաբրիստների՝ 1905-ի Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը պաշտպանող կուսակցության հիմնադիր ու պարագլուխ:

⁵ Եղբայնություն:

⁶ Ջավարյան Սիմոն (1866—1913)—Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիայի շրջանավարտ, Դաշնակցության հիմնադիրներից:

<2.> ԴԵԿՏ. <7/20, 1913>, ՇԱՐԱԹ ԳԻՇԵՐ

Հիվանդ եմ: Տունես դուրս ելած չունիմ: Ճաշեն վերջը, ժամը 9-ին, Խալիլ պեյ այցելության եկավ ինձի (էջ 44):

Իբրիմաթի Նշանավոր գործիչ Խալիլ քեյը (1874—?), որ այս ժամանակ Քուրֆիայի Պեյսական խորհրդի նախագահն էր (մի քանի ամիս ճեռա բնադրվեց օսմանյան խորհրդարանի

Հայտնի, Ձեռագրի չի այցելել առկա փառաբանական հետազոտմանը: Դրա իրավունքը չափազանց ճշգրիտ կերպով պարզ է ասել: Ահա զրաւեցից առաջինը:

<3> ՇԱՐԱՔ ԳԻՇԵՐ <7/20 ԴԵԿՏ., 1913>

Հիմնական տունն եմ երկու օրենքի վեր: Խաչիլ պեյ եկավ: Conseiller-ը¹ պետութեան միջամտութեամբ ընտրելու պահանջումն են հրաժարի կիսգրե²: Իսկ համոզման զինքը: Թե այս միջամտութիւնը և թե conseiller-ը inspecteur-ի³ փոխակ տալու կհամոզման: Մյուս կետերուն վրա⁴ դուրսով պիտի համաձայնվի, պիտի զօրութիւններով համաձայնութիւնը պիտի փոխանակվի Դրան թե Դեսպանատան մեջ: Նա՝ իրեններուն, ես՝ մերեններուն կարծիքը: Իրապահանք: Խոսակցութիւնը անհատական և մտերմական է: Հետո հայոց և թուրքաց մեջ լարված հարաբերութեանը բարձման վրա կմտածենք, միջոցներ կխորհինք, ձեռք ձեռքի բարենորոգումներն իրագործելու միջոցներուն վրա կխորհինք: Հողային հարցի մասին ամեն գոհացում տալու: սլատրաստականութիւն կհայտնեն, ընդունված օրենքը իր կարծիքներուն համաձայն խմբագրելու հոժարութիւն կցուցնեն:

Հայկ. բարենորոգմանց հարցին մեջ կարևոր թվական մըն է այս գիշերը: Ռուս դեսպանի⁵ մտքն իսկ շանցներ, թե conseiller-ն inspecteur-ի վերածել կարելի է:

Ինչե՞ր ըրի Խաչիլ պեյը համոզելու համար Աստված գիտե: Ան զիս համոզելու տեղ, ես ղինքը համոզեցի: Թող այսքանը բավ է (էջ 57):

¹ Խորհրդական:

² Եվրոպական տերութիւնները պահանջում էին բարենորոգումների իրականացումը վերահսկել իրենց տեսուչների (րենիւների) միջոցով, իսկ Բ. Դուտը պնդում էր, որ տեսուչները իրենք թուրքահայտակ, բայց ունենան եվրոպացի խորհրդականներ:

³ Վերատեսուչ:

⁴ Նկատի ունի 1913-ի սեպտեմբերի 10/23-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանների մշակած և վեց կետից բաղկացած ծրագիրը, որը պաշտպանում էին նաև Անգլիան ու Յարեսիան և որը ռուսական դեսպանը հանձնել էր մեծ վեղիրին (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտութեան և խորհրդային արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828—1923). Երևան, 1972, էջ 276—281):

⁵ 1912—1914 թթ. Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանը Ն. Վ. դը Գիբսն էր:

<4> ԴԵԿ. <8/21, 1913>, ԿԻՐԱԿԻ

Առավոտ կանուխ լուր տվի Վահանին¹:

Գիշերը ժամը 9-ին հավաքվեցանք մեր տունը. Պատրիարք², Գարայան³, Համբարձում Պոլաճյան⁴, Կարո⁵, Փափազյան, ես:

Իմ տեսակետս շնորհունվեցավ:

¹ Գաղականական գործիչ, Ապահովութեան հանձնաժողովի «անդամ-քարտուղար» Վահան Փափազյանը (Կոնս, 1876—1973):

² Կ. Պոլսի պատրիարքը Զավեն Տեր-Նդիկյանն էր (1869—?), ընտրվել է 1913-ի օգոստոսի 30 (սեպտեմբերի 12)-ին, սահմանադրական ուխտը կատարել է նոյեմբերի 8/21-ին: ³ Գարայան Ստեփան (1855—1933)—օրենսգիտ, քաղաքական ժողովի ատենապետ:

⁴ Պոլաճյան Համբարձում (Մուրատ, 1867—1915)—հնչուկյան գործիչ, օսմանյան խորհրդարանի երեսփոխան:

⁵ Կարո (Արմեն Գարո, Գարեգին Փաստրմաճյան, 1872—1923) — Ժնևի համալսարանի շրջանավարտ, քիմիայի գոկտոր, գաղականական գործիչ, օսմանյան խորհրդարանի երեսփոխան:

Այս խորհրդակցությունը Ձեռնարկը նվիրել է նեեկյալ ավելի հանգամանալի նրկա գրա-
ռումը.

<5.> ԿԻՐԱԿԻ ԳԻՇԵՐ <ԴԵԿՏ. 8/21, 1913>

Պատրիարքը, Գարայան, Փափազյան, Հ. Պոյաճյան և Փաստրմաճյան
ներկա են: Մանրամասն կրացատրեմ խալիլ պեյի առջի գիշեր ինծի ըրած
անակնկալ այցելությանը մեջ անցած խոսակցությունը և հաջողելս զինքը
համոզելու, թե ընդունի հետևյալները. 1. Պետությանց միջամտությամբ
<consentement>¹ մը ընդունի: 2. Փոխանակ conseiller-ի վերադառնա
լստ առաջնույն inspecteur général-ի²: 3. Թե որ բոլոր համաձայնությունը
կնքվի պետությանց հետ: 4. Մյուս պայմաններուն վրա. ա. Կես առ կես,
պաշտոն<եություն>, կրթական տուրքի բաժին, հողային հարց և այլն
կարելի եղածին չափ մեծ գիշում ընեն մեզի: Ասոր փոխարեն ան կ'ուզե՝
ա. որ էությունը պահելով արտաքին ձևերը փրկենք և ըսել չի տանք, որ
եվրոպական contrôle³ դրինք Անատոլուի վրա՝ կառավարությունը և իթթի-
հատը վարկաբեկ չընելու և իսլամաց և հայոց մեջ մեծ խրամատ մը չի բա-
նալու համար: Բ. Որ այս համաձայնության մեր մեջ գանք նախապես, որ-
պեսզի իթթիհատի և հայ ազգին հարաբերությունները առջի 4 տարվո առ-
ջի մտերմության վերադառնա: խալիլ պեյի խոսքերը, թե անոնք կփափա-
գեն, որ միջազգայնացումը ավելնա, որպեսզի Ռուսիա չի կարենա մտնել
Հայաստանի մեջ, կրկնեցի մերիններուն և հայտնեցի, որ մեծ հաջողություն
մը կհամարեի այս գիշումները ձեռք բերիլ անկե, որ եկած էր առաջին կե-
տին վրա, որ ամենն էականն էր, ուէ գիշում չընելու:

Ոչ ոք մտիկ ըրավ ինծի: Ամենքը առանց <համոզիչ> փաստ մը տա-
լու, ինծի դեմ ելան: Զի պնդեցի, բայց սրտես արյուն գնաց: Ազգը պիտի
տուժե որոշ չափով այս ընթացքեն: Վաղը գուցե պարագաները փոխվին:
Աստված տա, որ քիչ վնասով ելլենք մեջեն: Խուժանավարությունը կտանի
զմեզ, այլևս դիմադրել անհնար է: Ամեն ոք իր մտքին կապված կմնա: Ինչ-
պես ուրիշ անգամներուն մեջ ալ տեսա, կուսակցությունները իրարու դեմ
քով (1 ա. ֆր.)-ի պատրաստ կզգան, ոչ կուսակցականները վախկոտ կամ
անհայրենասեր չի կոչվելու համար կխոնարհին անոնց առջև (Պատրիարք,
Գարայան): Ես միայն կընդդիմակայեմ, բայց մենակ եմ: Քանի՞ անգամ
այս ջովներություններու դեմ ելա հաջողությամբ (համաձայնություն Գերմա-
նիո և Ռուսիո մեջ)⁴, բայց ալ հոգնած եմ: «Արիւն ձեր ի գլուխ ձեր» (էջ 56):

1 Համաձայնություն:

2 Գլխավոր վերատեսուչ:

3 Վերահսկում:

4 Տե՛ս № 3 զրառման 4-րդ ծանոթագրությունը:

<6.> <ԴԵԿՏ. 8/21, 1913, ԿԻՐԱԿԻ ԳԻՇԵՐ>¹

Մեր խորհրդակցությանց մեջ ես սա կարծիքը հայտնեցի այն պարա-
գային համար, որ խալիլ պեյ հաստատական պատասխան տա երեք կետե-
րուն վրա ալ.

ա. Inspecteur général-ին ընտրությունը իրոք պետությանց հաճու-
թյամբը կատարված պիտի ըլլա: Բ. Եթե թուրքերը զինքը հրաժարեցնեն կամ
անոր գործը saboter² ընեն և <Բ. Գուռը> հրաժարի անոր հաջորդին պե-
տությանց պաշտոնական հաճությամբը նշանակելուն, Գուռը հոժարություն
պիտի հայտնե: Գ. Բարենորոգմանց հարցին վերաբերող բոլոր տրամադրու-

թյունները պետությունը պիտի հաղորդվին գրով մը, որին մեջ Դուռը ինքը պիտի խնդրե, որ պետությունը prendre acte³ ընեն իր խոստումներուն: Մեր գործին միջազգային հանգամանքն է տրված: Intervention⁴ ապահովված կըլլա այն շափով, որ ռուսական առաջարկության⁵ մեջ կա և ռուսական առաջարկության վրա անհամեմատ առավելություն կընծայե իր իսկության մեջ: Ուստի այս ձևին վրա կարժե նուպար փաշային⁶ կարծիքն իմանան և իհարկե ռուս դեսպանատան տրամադրությունը շոշափելու Մեր վերջին sondage⁷ այս դեսպանատան քով ավելի անհետևանք մնաց: Ռուս զինվորական կցորդին հայտարարությունն⁸ ալ նշանակելի է: Նշանակելի է նաև, որ դեսպանատունը բժիշկ Զավրիեֆը Բեթերպուրկ խրկելեն օգուտ կակնկալե: Նշանակելի է Ֆրանսիական կառավարության և պ. դեսպանի տված խորհուրդները փաշային թուրքաց հետ խոսակցելու մասին⁹:

Ընդհանուր միջազգային կացությունն այսօր թուրքերուն նպաստավոր է, և Ռուսիա ալ խիստ նեղացած է անոնց դեմ: Այս վիճակը ես թուրքաց հետ խոսակցության ամենեն նպաստավոր ժամը կհամարիմ: Մեյ մըն ալ այս օրը և ժամը չի պիտի գտնենք: Թուրքերը վերջապես այս կամ այն պետության հսկողություն մը ընելով, այս դժվարությունն պիտի ազատին, եթե մենք համաձայնած չըլլանք և այն ատեն հետևանքը շատ ծանր կըլլա հայոց համար:

Հետո ռուսական վերջին առաջարկությունը բոլորովին հեռու է մեր՝ այդ դեսպանատան վերջին անգամ ներկայացրած ծրագրեն: Իրոք ռուս ծրագիրը անգործադրելի է: Մեկ բան մը կհաստատե ան. եվրոպական միջամտության մը առաջին քայլը, բայց իբրև բարենորոգում, իբրև գործադրելի բան՝ ոչինչ կա անոր մեջ: Մանավանդ կվախնամ, որ դեռ այդ առաջարկությունն ալ հանին: 1. (Դեսպանաց հետ խորհրդակցություն). այո՛: 2. Կես առ կես: 3. Կրթական տուրքի պես տրամադրությունները (կես առ կեսի տեղ ղեկավար տարտամ բան մը): Ահա առիթը կներկայանա conseiller-ին տեղ inspecteur վերադարձնելու: Մյուս կողմն գործին միջազգային հանգամանքը բնավ կորսնցուցած չի պիտի ըլլանք, ոչ իսկ իմ կարծիքովս պակսեցուցած: Եվ հետո թուրքաց հետ ալ հարաբերություննիս, որ շատ դժնդակ դարձած է և հետզհետե սպառնական հանգամանք ստանալու վրա է, բարվոքած կըլլանք:

Այս փաստերը ներկաներուն գոհացուցիչ չի թվեցան: Անոնք սա կարծիքը հայտնեցին, որ թուրքերը միայն զմեզ խաբելու և ներկա նեղ վայրկյանը անցնելու հետամուտ են և թե վերոգրյալ ձևը եվրոպական միջամտությունը գործին մեջեն հանել և հայերը թուրքաց հետ զուլիս գլխի ձգել էր, պիտի ըլլա ասկե վերջը թուրքերը զմեզ անարգել պիտի փճացնեն: Ու ռուսական ծրագիրը, թեև անգործադրելի՝ նախամեծար էր գործադրելի ծրագրե մը, որուն մեջ contrôle-ին մասը դյուրացած պիտի ըլլար: Որոշեցին,

1 Գրառման առաջին էջը պակասում է:

2 Խախտնել:

3 Ի գիտություն ընդունել:

4 Միջամտություն:

5 Նկատի ունի Ն. Վ. Գիրսի՝ Բ. Դուանր ներկայացրած 1913-ի հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8)-ի առաջարկությունները (տե՛ս Հայաստանը..., էջ 292):

6 Պողոս Նուպար փաշա (1858—1926)—եգիպտահայ մեծատուն և հանրային գործիչ, որին Գևորգ Ե կաթողիկոսը նշանակել էր Փարիզում Ազգային պատվիրակության նախագահ:

7 Պարզաբանում:

8 Կ. Պոլսում ռուսական դեսպանության զինվորական կցորդի հայտարարության մասին տե՛ս № 39 գրառման մեջ:

9 Նուպար փաշային Կ. Պոլիս հրավիրելու միտքը հուշել է Յոհաննես Լեպսիուսը 1913-ի օգոստոսին և պաշտպանություն է գտել Քալեաթի կողմից (տե՛ս Հայաստանը..., էջ 265—266): Ավելի ուշ հետևել է Բ. Դուան պաշտոնական հրավերը (տե՛ս «Մշակ», 1913, № 275):

իմ կարծիքիս հակառակ, որ բացասական պատասխան մը տամ հալիլ պեյին (էջ 69):

<7.> ԵՐԿՈՒՇԱՐԹԻ <ԴԵԿՏ. 9/22, 1913>¹

Գացի կանուխ հալիլ պեյին մերժողական պատասխան տալու: Ապշե-
ցավ, ցավեցավ, զգացի որ խոր կերպով զայրացավ (էջ 56):

¹ Գրառման տարրերակը տե՛ս Զոհրապի ֆոնդ, № 17, էջ 44:

Երեւոյի օրը՝ դեկտեմբերի 10/23-ին. Զոհրապը հրավիրվել է Ապահովւթյան հանձնա-
ժողովի նիստի: Դատելով գրառումների հերթականությունից, նիստից առաջ նա հանդիպել է
Ռամկավար կուսակցության անդամ, Ազգային ժողովում «Կեդրոնի խմբակցության» ղեկավար
Դավիթ Տեր-Մովսիսյանի և իրավաբան, զաշնակցական գործիչ Հաբություն Շահրիկյանի
(Ատում, 1869—1915) հետ: Այդ առթիվ գրառել է.

<8.> <ԴԵԿՏ. 10/23, 1913, ԵՐԵՎԱՆԻ>

Տեսակցություն Տ.<եր> Մովսիսյանի և Շահրիկյանի <հետ>, անոնց
հասկցնելու համար վիճակը: Մեկը սովորական (1 ա.) մըն է, մյուսը՝ հա-
վիտենական (1 ա.). Կյանքին մեջ առաջին անգամ հաղթողի դերը կանոն,
դիմացս՝ իր բազկաթուղին վրայեն, կնայի ինծի վեհապետի մը պես (էջ 44):

Ապահովւթյան հանձնաժողովի նիստի վերաբերյալ երեք առանձին գրառումներից սւշա-
գրավ են հետևյալ երկուսը.

<9.> <ԴԵԿՏ. 10/23, 1913, ԵՐԵՎԱՆԻ>

Ապահովւթյան հանձնաժողովին նիստը. Փարիզեն Փաշային նամակ-
ները¹. ղեսպանաց դիրքը մեզի դեմ. իմ կռիվս Շահրիկյանի հետ. Գարայան
«meme» բառին դեմ². Շահրիկյան կընդունի, որ իմ մտածած ձևը հավասար
է զորութեամբ, բայց ամենքը գամված կմնան իրենց հոգեբանության մեջ
(էջ 44):

¹ Հաշորդ գրառումից երևում է, որ այդ նամակներում նուպար փաշան տեղեկացրել է
իրեն Կ. Պոլիս հրավիրելու մասին (տե՛ս նաև № 6 գրառման 9-րդ ծանոթագրությունը):

² Ֆրանսերեն այս բառը նշանակում է՝ «նույն», Ռուսաստանի ղեսպանը համաձայնում է
նախագծում առաջարկել էր. «Բարձր Դուռը հույս է դնում մեծ պետությունների նույն բարե-
հաճ անցկացության վրա»: Բուրժուալի նախարարաց խորհուրդը պնդում էր հանել ընդգծված
բառը (տե՛ս Հայաստանը..., էջ 308—309):

<10.> ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆ <ԴԵԿՏ. 10/23, 1913>

Իմ կռիվս Շահրիկյանի հետ. երկուշաբթի օր Փարիզեն հասած նամակը,
որ Ֆրանսայի մեջ խորհուրդ տված են Փաշայի, որ Պոլիս դա թուրքաց հետ
համաձայնի: Հոս Ֆրանսայի ներկայացուցիչը նույն բանը կըսե: Մեր խե-
լացի դիվանագետները միայն կդիմադրեն¹: Կիրակի օրը ինծի դիմադրող
ընդդիմախոսողները հիմա <աղեկցեր> են: Նոր դիմադրող մը, մաղձի
ու դառնության թանձրացումը, որ Շահրիկ կկռվի: Բոլորը տեսան, որ մե-
ջը մարդ չունի:

Դավադրությունը² (էջ 57):

Որոշ ժամանակ ա՛յց Զոհրապը ընդարձակ նախնական վերադարձել է խալիլ բեյի այցելու-
ոյանը, իր տանը հրավիրած խաղաղակցությանը և Ապառնիսիայի հանձնաժողովի նիստի՝
հայտնելով հավելյալ մանրամասներ: Պարզվում է նաև, որ հանդիպել է Կ. Պոլսում առևտրական
ղեկավարության՝ առաջին քաղցման, իրավագիտության դոկտոր Ս. Ն. Մանդելշտամին (1869—
1939):

1 Դեկտեմբերի 12/25-ին մամուլում հրապարակված հաղորդումներից հայտնի դարձավ,
որ Նուպար փայան մերժել է Կ. Պոլսի գալու մասին Բ. Դոան հրավերը («Բյուզանդիոն», 1913.
թ. 5222):

2 Որոշակի շրջանակներում Զոհրապի շուրջն ստեղծվել է անառողջ մթնոլորտ, արվել են
ներան վարկարեկելու փորձեր: Այդ միտումը երևում է «Մշակի» Կ. Պոլսի թղթակից Շառայլի
մի թղթակցության մեջ, ուր գրել է. «Կրսովի թե Զոհրապ է՞ք... ի տան մեջ վերջին օրերս դու-
մարում մը եղած է կարգ մը իրեն համաժիտ անձերու ներկայության... Հոն Պատրիարքին
իտվելու եղած է ստորագրելու թուղթ մը, որոմ պիտի հայտարարվեր, թե հայերը եվրոպական
կաճառով չեն ուղեր: Զավեն Պատրիարք պարզապես ընդդիմացած է, անշուշտ բմբռնելով, թե
իրեն եղած այս հրավերը՝ բախտախնդիրներու ոհմակի մը կողմէ, ուրիշ նպատակ չունի, եթե
ոչ ազդին բաղձանքներու գերադասել իրենց անձնական բաղձանքները՝ ժերակուտական, մի-
նիստը, երեսփոխան ըլլալու... Կրսովի թե Շաիրիկյան—գաշնակցական մը—բուն կերպով այ-
սանած է Զոհրապի ե իր ընկերներուն ընթացքը» («Մշակ», դեկտեմբերի 28, № 290):

<11.> <Ի:ԿՏ. 7/20—10/23, 1913>

Սա հետևյալ փաստերը գործածեցի խալիլ պեյը համոզելու համար.

1. Բ. Դոանը հարկավ կարող է այսօր նույնիսկ Ռուսիան և Գերմանիան
իր կողմը շահել ասոնց կարգ մը առավելություններ շնորհելով, ճիշտ ինչ-
պես վարված է Ֆրանսայի և Անգլիո հետ: Կրնա պատահիլ, որ այսօր Հայ-
կական բարենորոգմանց դատը բոլորովին լքվի ամեն պետություններն:
Կհարցնիմ, ասիկա հաջողություն մըն է թուրքաց համար: Բնա՛վ, վասնզի
ցորչափ հայ ազգը կա, իր բարենորոգմանց հարցն ալ գոյություն պիտի
ունենա, իր պահանջումներն ալ պիտի մնան և օր ավուր ավելի ևս ծանրա-
նան: Բ. Դոան՝ պետությանց շնորհած պարգևները, զանոնք որոշ ժամանակի
մը համար լռեցնելու համար, պարապը պիտի երթան և 2—3 տարիի վերջը
ավելի ծանրակշիռ հանգամանք մը ստացած Հայկ. հարցի մը դեմը պիտի
դռնվին և իրենց նվիրատվությունները որեւէ օգուտ ունեցած չի պիտի ըլլան:

2. Կառավարություն մեկ կողմին չըլլար: <Ազգը> որպեսզի հաջողի՝
կառավարելու հատկություններ կուզի պետութենին և կառավարվելու տրա-
մադրություններ ժողովուրդին: Այսինքն՝ minimum գոնե վստահություն: Արդ
այսօր հայ ժողովուրդին այդ վստահությունը Բ. Դոանը վերցած է թուրք կա-
ռավարության վրային: Անիկա ցորչափ չի վերահաստատվի՝ որեւէ բարենո-
րոգչական դործ արդյունավոր չի կրնար ըլլալ: Թուրք կառավարությունը
պետք է փութա ունի դնով հայերը իր կողմը շահի, ապա թե ոչ անոնք,
որ այս պահուս դեռևս վարանող են, գուցե բոլորովին Ռուսիո հակին: Այն
ստեղծ ամեն զիջում շատ ուշ պիտի ըլլա արդեն:

Սվ պետք է հայերը շահել այն աստիճան, որ անոնք ըլլան հայկ. գա-
վառներու բնական պահապանները օտար մուտքերու դեմ: Պետության շահն
է աս: Հայկ. դժգոհության այսպես երկարիլն արաբական հարցին՝ ալ ծան-
րացումին ե հետո թերևս կառավարումին հակառակություններուն ալ շար-
ժոմներուն ծառայել: Ասոնք մտածվի՞ր բաներ են: Նախ՝ օսմանցիության
շահը, երկրորդ՝ կառավարության և իթթիհատի կուսակցության շահը, եր-
րորդ՝ անոր պետներուն շահը հրամայապես կպահանջեն, որ այս հարցը փու-
թով և խաղաղությամբ վերջանա:

3. Ամեն ոք controle-ի խոսք մը կարտասանե կոր: Խնդիրը կարգավորելիք <բարենորոգումին> օտար պաշտոնյային անվանումի մեջ պետությանց մասնակցությունն է: Ատիկա controle չէ, այլ garantie,³ ուստի controle-ը մեր prestige-ի կռակն է:

Գաղափարը անհիմն է: Ինչո՞ւ համար controle-ի անուն կուտաք բանի մը, որ բոլորովին տարբեր բան է:

4. Garantie-ի մը տրվիլը ինքնին prestige-ի (1 ա. ֆր.) չի որոշել իրավագիտորեն, բայց եթե անվանումը inspecteur-ին պետությանց համաձայնությամբը գործադրեք, իսկույն կրնաք դուրսին ցուցնել զայն իբրև թե դուք մենակնիդ այդ inspecteur-ը նշանակած եք: Պետությունները շահ չունին տաճիկներուն վրա <բռնանալու>, թե իրենք ալ մասնակցած են: Այս պարագային կմնա ապագան, այսինքն՝ remplacement-ի⁴ պարագան կանխատեսել: Անհրաժեշտ է, որ Բ. Դուռը այս մասին գրավոր հանձնառություն մը առնե պետությանց հանդեպ: Այդ հանձնառությունը inspecteur-ին քվեի դրվելու կամ հրաժարական տալու պարագայի համար զորություն պիտի ունենա: Ուրեմն՝ պայմանի ենթարկված garantie մը տված պիտի ըլլաք և զեթ սկիզբը այնպես պիտի կրնաք ցույց տալ, <թե> նույնիսկ պետությանց միջամտությունը տեղի ունեցած չէ: Տեսակ մը sursis⁵ ստացածի պես պիտի երևաք: Որչափ inspecteur-ը չի հրաժարեցնեք կամ չի հրաժարի, ինչ որ նույն բանն ըսել է, զերծ պիտի մնաք պետությանց միջամտութենէն, հակառակ պարագային ընտրության գործին մեջ այս անգամ ալ նորեն բարենորոգումը հարգած չի պիտի ըլլաք, քանի որ Inspecteur générale-ը պիտի ճամփու դնեք կամ հրաժարական պիտի պարտավորեցնեք: Այդ պարագայի համար տրվելիք garantie մը համար թուրք հանրային կարծիքը զձեզ չի կրնար մեղադրիլ և դուք այս գործին ձեր տեսակետը պետությանց ընդունել տվածին ձևով դուրս պիտի ելլեք:

Որչափ որ դատեցի, այս փաստերը, խալիլ պեյին վրա լավ ներգործություն մը ըրին, և ինծի համամիտ եղավ, բայց իր կուսակցության կողմն ամենաբուռն ընդդիմության մը բախելիքն ալ ինծի իմացուց: Դեպքերը, զոր վերջին ստուգեցինք, եկան հաստատելու, թե իրոք ալ խալիլ պեյ ամենասաստիկ ընդդիմության բախած էր:

Սա փութացի Պատրիարքին իսկույն լուր տալ, զինքը au couran!⁶ դնել: Մեր տունը հավաքված ժողով մը կասկածանքով վերաբերվեցաւ այս solution-ին⁷ հանդեպ: Ամենահակասական փաստերը հանեցին անոր դեմ: Սա ապշած մտիկ կրնեի: Solution սա էր. Դուռը առաջին անգամ Inspecteur générale-ը պիտի նշանակե՞ր՝ պետությանց հաճությունն ուզելով բերանացի կերպով: Պետությունները իրենց մեջ համաձայնելի հետո հաճություննին պիտի հայտնեին բերանացի, և Դուռը այդ Inspecteur générale-ը պիտի նշանակեր և անոր ընտրությունը տեղությանց պիտի հաղորդէր գրավոր կերպով և գրավոր հանձնառություն ալ պիտի առնէր, թե անոր replegant-ի⁸ պարագային պետությանց recommandation-ով⁹ պիտի անվանում ընելու: Ատիկա իրոք համազոր էր, ձևական տարբերությամբ մը, պետությանց կողմն առաջարկված ձևին: Բայց գտնվեցան ոմանք, որ համազոր չի նկատեցին: Հետո փոխանակ Conseiller-ի Inspecteur générale-ի վերադարձը կար, որ արհամարհելի առարկություն մը չէր: Այդ ալ աննշան բան մը համարվեցավ: Ոմանք ալ ելան ըսելու, որ Դուռը երբեք այդ կերպ գրավոր հանձնառություն ընելու չի պիտի հոժարեր, վասնզի այդ հանձնառությունը ըստ էության պետությանց առաջարկածին հար և նման էր: Իզուր այս առարկություններուն հակառակն և զիրար ջրող հանգամանքը բացատրելու չանացի: Ոչ ոք մտիկ ըրավ ձայնիս, և պաշտոն հանձնվեցավ ինծի, որ խալիլ պեյի հայտնեմ, որ հայերը չեն մոտենար այս եղանակին ալ: Սա այդ հանձնարարությունը հետևյալ օրն իսկ փութացի կատարել վախելու եղանակով մը: Միևնույն ժամանակ փութացի անցած-դարձածն ուս դեսպանատանն ալ լուր տալ: Պ. Մանտելսթամին բացատրեցի այս բոլորը: Անիկա աս

կարծիքը հայտնեց. կարևորը այն է, որ իրոք պետությունները conseiller-ին ընտրությանը մասնակցին: Այս մասնակցությանը ինչ ալ անուն տրվե, միշտ պաշտոնական է, միայն թե գրավոր չէ: Այդ գրավոր չըլլալուն միակ հետևանքը այն է, որ Դուռը թերևս (1 ա.) ստանա: Այդ ալ անհնար է, քանի **<որ>** 6 պետությանց դիվանագիտությանց մեջ ջատ մը (3 ա.) պիտի կազմե, հետո remplacement-ին համար պետությանց recommandation իրրև թե գրավոր կերպով enquête¹⁰ պիտի կազմե: Այս ևս ուսական ծրագրեն միևնույն բանն են: Ինքը չի հավատար, որ թուրքերը ասոր հոժարին, եթե **<recommandation>** սկզբունքը չի պիտի ճանչնան conseiller-ին տեղ: Եթե Inspecteur générale-ն վերադարձվի՝ իրոք ատիկա մեծ բան մը պիտի ըլլա: Եթե քովնտի խոսակցութենեն այս փոփոխությունը ձեռք բերվի, հարկավ դեսպանը զոհ կըլլա:

Հաջորդ օրը երկու դեսպանները հավաքական դիմում մը ըրին և մեծ նպարթոսը առաջին պատասխան մը տվավ¹¹: Անիկա կընդունեն, որ conseiller-ը նախ պետությանց համաձայնությամբ ընտրվեն, բայց բերանացի համաձայնությամբ: Երկրորդ՝ թե remplacement պիտի ըլլար պետությանց (2 ա. ֆր.) ընտրվելուն և այդ մասին գրավոր (2 ա. ֆր.): Այս լուրը սխալ իմացված էր մենե՝ կարծվելով, որ Դուռը կառաջարկեր (5 ա. ֆր.) ձեռք Դերման և ուս դեսպան **<ներք>** այս ձեռք ընդունելի կնկատեն և իրենց (5 ա.):

Հաջորդ օրը այս խնդիրը Ապահ. հանձնաժողովին մեջ խոսակցության նյութ եղավ: Նախ դիադոլություններ հայտնվեցան, թե ինչու Պատրիարքը իմ տունս եկեր է, հետո թե ինչու ըստ անդամները նիստի չեն հրավիրվեր, հետո ըստ խնդրույն վրա վիճեցան: Նախ concours¹² և recommandation լառերը կպահեին: Մեծ ասորերություն չի տեսնվեցավ, հետո «même» բառը¹³ վերցնելու կարծիք հայտնվեցավ: Վերջիվերջո ընդունվեցավ, որ Դուռն առաջարկությունը համարժեք է ուս programme-ին¹⁴ (էջ 50—54):

¹ Փարիզի Արարական և Իթիհատի կոմիտեների միջև 1913-ի ամռանը բանակցություններ ևն անդի ունեցել արարական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու շուրջ (ի շարս այլ պահանջների, արարները ուղում էին, որ կուսակալներն ու այլ պաշտոնյաները լի-նենին իրենցից, բարենորոգումների գործը հսկեն անգլիացի քննիչներ և այլն):

² Երաշխիք:

³ Հեղինակություն, վարկ:

⁴ Փոխարինում:

⁵ Հետաձգում:

⁶ Տեղյակ:

⁷ Լուծում:

⁸ Փոխարինող:

⁹ Հանձնարարական:

¹⁰ Քննություն:

¹¹ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը և Գերմանիայի դեսպան Հանս Վագենհայմը (1859—1915) դեկտեմբերի 12/25-ին այցելել ևն Թուրքիայի մեծ վեզիր (եպարքոս) Մեհմեդ Սալիկ Հալիմ փաշային (1853—1922) և ներխույրիլ բարենորոգումների համատեղ մշակած ծրագիրը: Մեծ Վեզիրի հայտարարության մասին: Տե՛ս Հայաստանը..., էջ 307:

¹² Աշակցություն:

¹³ Տե՛ս № 9 դրաման 2-րդ ձանդագրությունը:

¹⁴ Մթադիր:

<12.> ԿԱՐՈՆ ԵՎ ԱՆՈՒՆԻ <ԴԵԿՏ. 10/23, 1913, ԵՐԵՎԱՆԻ>

1. <Կ> խրատեն <որ> զգուշանամ թուրքաց հետ տեսնվելի. հոսանքներ կան. Վահան կուզե, որ քաջալերեմ զանոնք, որպեսզի (1 ա.) ընեն: 2. Խալիլին նամակ¹ (էջ 44—44 ա.):

1 Զոհրապի արհիվում (№ 63) պահպանվել է սույն նամակը՝ թվագրված 1913-ի գեկ-ախմբերի 10<23>-ին: Խալիլը ցանկություն է հայտնել շորեքշարթի առավտյան կամ հինգ-շարթի տեսակցել Զոհրապի տանը կամ իր բնակարանում և առաջարկել է նշանակել ժամը: Այս նամակի մասին Զոհրապը ակնարկել է նաև 56-րդ էջի նշումով:

Խալիլ բեյի հետ հանդիպումը կայացել է վերջինիս բնակարանում, և Զոհրապ, այդ ժո-րով կառաարել է հետևյալ երկու հակիրճ գրառումը.

<13.> Դեկտ. 11/24, 1913, ԶՈՐԵՔՇԱՐԹԻ

Տեսություն ...

Թալաաթ պելը կհանդիպեմ. ընդդիմություն առաջին պայմանին դեմ (էջ 44 ա):

<14.> ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԸ <Դեկտ. 11/24, 1913>

Խալիլի տունը. Թալաաթ ալ. գծությունները պետությանը հաճության ընթացքին մեջ¹. կհամոզեմ. Թալաաթ կդիմադրեմ. անձնապես խորհուրդներ (էջ 56):

1 Տարածությունները վերաբերել են վերատեսուչներ նշանակելու խնդրին (տե՛ս № 3 գրառման 2-րդ ծանոթագրությունը):

Այս հանդիպման մանրամասնությունները Զոհրապը չի օրագրել: Բայց, ինչպես երևում է հաջորդ ելույթներից, բուրժ վործիչների հետ տեսակցությունները շարունակվել են նաև հե-աադա օրերին, և Զոհրապը մշակել է որոշակի ծրագիր: Այդ է վկայում առանձին բզրի վրա «Թուրքերի, ըսվե՛իք» վերնագրված գրառումը, որի հակառակ երևսին մատիտով հշել է. «Խա-լիլ պեյի հետ տեսակցության հաջորդ օրը ծրագրած»:

<15.> ԹՈՒՐԵՔԵՐՈՒՆ ԸՍՎԱԼԻԹ <Դեկտ. 12/25, 1913, ՀԻՆԳՇԱՐԹԻ>

1. Եթե պետությանը հետ Բանակցությունները ելք մը չունենան, ի՞նչ պիտի ըլլա: Բնավ բարենորոգում չի՞ պիտի ի գործ դնեն: Պիտի դնեն որոշ չափով, բայց ո՛չ հայոց, ո՛չ պետություններու առջև խնդիրը կարգադրած չի պիտի ըլլան: Հայերը՝ միշտ անստույգ վաղվան վրա եղածին՝ կարևորու-թյուն չի պիտի տան: Պետությունները chantage-ի համար հարմար պա-րագային պիտի գործածեն զայն՝ ի հարկին հայերն ալ դրդելով: Բարենորո-դումը իր իսկութենեն զատ արտաքին մը ունի: Այդ արտաքինն հայ ազգին զգացումին ալ վստահություն ներշնչելու է: Սխալ է կարծել, որ բարենորո-գումը եթե ի գործ դրվի՝ խնդիրը կլմննա, եթե վաղվան ապահովություն չու-նենա: Բարենորոգումներ կան, որ ի գործ կդրվին, բայց օգուտ չեն ունե-նար նայեցեք (բանակին մեջը):

2. Հայերը վաղվան համար ապահովություն ուզելուն մեջ իրավացի են: Այդ ապահովությունը <indépendant>¹ միայն կըլլա: Թուրքերը կխոստո-վանին այդպես ըլլալը: <Indépendant>-ը զանազան չափեր և ձևեր ունի: Իրավախոհություն ցուցնեք երկու կողմի: Մենք մեծագույն չափով պիտի ցուցնենք: Թող թուրքերն ալ որոշ չափով զիջողություն ընեն: Contrôle չի խոսինք: Ահա վասիկ մեծագործը: Représentation² կամ re-commandation ընդունին ի հարկեն միայն 10 տարի պայմանաժամով:

3. Բարենորոգմանը հիմքերուն մասին engagement³ թող չառնին, բայց ծանուցանեն ինչպես սովոր են և նույնիսկ ինչպես (2 ա.) ըրին: 1. Կես առ

կես (1 ա. 3ր.) տեղերու մեջ: 2. Հողային հարց: 3. Լեզու: 4. Զինվորական ժառանգություն: 5. Կրթական տուրք: 4. Համիտիեն (էջ 70):

- 1 Ինքնուրույնություն:
- 2 Ներկայացուցչություն:
- 3 Պարագրաֆություն:

<16.> ՊԱԳԱՆՁԱՏՆԻ ՄԱՆՎԱՆ ՈՐԸ <Դեկտ. 12/25, 1913, ՀԻՆՇԱՐԹԻ>

Տեսություն ճավիտ պեյի² տունը: Վարդգես³ ներկա (էջ 44 ա):

- 1 Պապանդան Իսմայիլ Հազր Ինչ—օսմանյան խորհրդարանի նախկին երեսփոխան, հրապարակագիր և դասախոս, հանկարծամահ է եղել 1913-ի դեկտեմբերի 12/25-ին:
- 2 Մեհմեդ Զավիդ Բեյ (1867—1926)—Թուրքիայի ելմտական (ֆինանսների) նախարար:
- 3 Վարդգես (Հովհաննես Սերինկյուլյան, 1871—1915)—դաշնակցական զործիչ, օսմանյան խորհրդարանի Լրևփոխան:

<17.> ԽՈՔԱԼԷԱՆԻ <1913, Դեկտ. 13/26—Դեկտ. 23/5 ՀՈՒՆՎ., 1914>

Ճաշ ճավիտ պեյի հետ. Վարդգես ներկա:
 Ճավիտ ամեն բան ընդունեցավ:
 Մերինները կշարունակեն զիս հալածել և սպառնալ: Նույնիսկ դաշնակցականները հակասական դիրքի մեջ:
 Կապշև, որ ոչ որ կտեսնե մեր վիճակին ժանրությունը և թող կուտա, որ սլատահի ինչ որ ճակատագրված է:
 Ստացա սպառնական նամակ². Պատրիարքին կխրկեմ:
 Դավադրություն և Պատրիարքին դիմում:
 Կսպասեմ ու կբաշվիմ: Տարածությունները (էջ 44 ա):

- 1 Ռուսահպատակ հարուստ, Կ. Պոլսում ուներ հյուրանոց, ճաշարահ, գինետուն:
- 2 Բարենորոգումների հակառակորդ թուրք ազգայնամուլները, տեսնելով բանակցությունների հաջող ընթացքը, սպառնալի նամակներ են դրել նաև պատրիարքին, «Ազատամարտ» թերթի խմբագրությանը, ինչպես և Նուսրի փաշային:

<18.> ԵՐԵՎԱՆԻ <Դեկտ. 24/6 ՀՈՒՆՎ., 1914>

Վահանին նամակը¹: Կիսնդրե, որ սպասեմ (էջ 45):

- 1 Խոսքը Զորային արխիվում պահվող (Ձ 71/7) Վ. Փափազյանի հետևյալ նամակի մասին է.

Սիրելի Զոհրապ ԼՖ.,

Պ. Թարգմանը (Մանգեյշտամբ—Ա. Շ.) ճանձնեց մեզ ստորագրված գրավոր պատասխանը: Այս իրիկուն, այս վայրկյանիս (81/2—9) հրավիրած եմ Եպան. ճանձնաժողովը Բերայի խորհրդարանը: Նրախառնադրող կկացուցանեի գիս, եթե գայի ժողովի, որովհետև վաղը 9-ին մեր պատասխանը կսպասե գրավոր այդ ուղե-ի մասին: Ժողովին վերջ ես և Գաբայան և քերես ուրիշ մը գանձ Զեզի գրավոր պատասխան մը պատրաստելու: Վիճակը այնքան լուրջ է, որ լիանույս եմ, թե շտիտի մեծեղի մասնակցիլ:

Հարգանքներով՝ Վահան

Ժամը 81/2

<19.> ԵՐԵՎԱՆԻ ՕՐԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՄԸ <ԴԵԿՏ. 24/8 ՀՈՒՆՎ., 1914>

Գարալան և Փափազյան: Ինչ կենդանին, որ խմբագրվելիք գիրքը² գրեմ: Կմեխի աշակցիլ, բայց ինչ արանձանքին վրա կգրեմ գիրք (էջ 55):

¹ Գրառման տարբերակը տե՛ս էջ 44 ա:

² Սեփ վեպի գեղեցիկների 24 (հունվարի 6, 1914)-ին Գիրսին է հանձնել համաձայնա-
նախադրանքի թուղթի վրա (տե՛ս Հայաստան..., էջ 310—311), որոնց
...ի վրա գնապանը հարգել է հայերի կարծիքը (տե՛ս № 18 գրառումը և ծանոթագրությունը):

<20.> ԶՈՐԵՔ. <ՇԱՐՈՒՆ, ԴԵԿՏ. 25/7 ՀՈՒՆՎ., 1914>

Նամակ Վահանին¹, որ հինգշաբթի առտու ինծի պատգամավորության մը գալուստը կհիմացնե (էջ 55):

¹ Խոսքը Զոհրապի արխիվում պահվող (№ 71/5) Վ. Փափազյանի հետևյալ նամակի մասին է:

Տիար Զոհրապ էֆ.,

Այսօր Ապառնով. հանձ. կրկին անգրագործավ: Ձեր շեղագած դիրքի վերաբերմամբ և այս մասին Ձեր հետ խոսելու համար իմ անդամներին պատր. փոխանորդին և Գաբայան էֆ.-ին հանձնարարած է գալ Ձեր տուն վաղը ժամը 10 1/2-ին: Կենդանի սպասել իրենց:

Հարգանքներով Վահան:

Զորեք. իրիկուն

<21.> <ԴԵԿՏ. 25/7 ՀՈՒՆՎ., 1914, ԶՈՐԵՔՇԱՐՈՒՆ> 1

...Լրբույությունները անգիտակ անցած դարձածին, միմիայն սուտով ու զրպարտությունով զինված իրենց քսությունները շարունակեցին: Այսօր ատոնք ամոթահար եղած են արդեն: Պատրիարքն ալ, Քաղ. ժողովի ատենապետն ալ, Ապահովության հանձնախումբն ալ ամոթով են քուլս և զգալու վրա են գործված սխալին մեծությունը, բայց ուշ է արդեն:

Դեսպանին լուր խրկեցի իսկույն և պատասխան եկավ, թե դեսպանը շատ touche² է: Այս պարագային համար պատգամավորությունը³ ավելորդ է: Պատրիարքին նամակը կբավի: Գրեցի նամակին պատճենը և հանձնեցի Վահանին:

Վաղը նիստի հրավեր է եղեր: Ապահովության հանձնաժողովը կխնդրե, որ անպատճառ ներկա դառնա: Գտնվիմ¹ շատ լավ, բայց ի՞նչ ըսելու համար (էջ 46):

¹ Սկիզբը պակասում է, բայց բովանդակությունից պարզ է, որ № 19 գրառման մեջ շարադրված իրողության մասին է:

² Ազգված, հուզված: Ինչպես երևում է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարին Գիր-
սի հղած հեռագրից, նրան վերջով վեցրել են համաձայնագրի նախագծում թուրքերի մացրած
...լուրջ փոփոխությունները (Հայաստան..., էջ 310):

³ Տե՛ս № 19 գրառման 2-րդ ծանոթագրությունը:

<22.> ՀԻՆԴ. <ՇԱՐՈՒՆ> ԱՌՏՈՒ, <ԴԵԿՏ. 26> 8 ՀՈՒՆՎԱՐ <1914>, ԺԱՄԸ 10-ԻՆ

Գարալան և Պատ. <Րիարթական> փոխանորդը² տունս եկան պաշտո-
նապես ցավ հայտնելու և խնդրելու համար, որ աշխատություններս շարունա-
կեմ: Զայրացած էին: Անոնք, Կարոն և Վարդգեսը կպնդեին, թե չի լինելու
Հայկ. դատը: Տեղի կուտամ (էջ 45):

¹ Գրառման երկու տարբերակը տե՛ս էջ 44 ա և 45:

² Գաբրիել եպոս. Ճեմաշիրեյան (1850—?):

<23.> ՀԽՅՇԱՔԹԻ ԳԻՇԵՐ, <ԴԵԿՏ. 28> 8 ՀՈՒՆՎԱՐ <1914> 1

Նիստ Բերայի աղդ. խորհրդարանին մեջ:

Ինծի ներկայացուցին այն ծրագրին սեագիրը, <որ> ղեկավարությունը հանձնել է մեզի. երկու copie² օրինակներն կազմված է: խմբագրման ոճն հասկցա, որ ղեկավարությունը (1 ա.) ըսած է մեզի հայտարարելով, որ Բ. Դռնեն իրեն հանձնված է, որպեսզի կարծիք հայտնի: Իմ կարծիքովս, թե որ երկու copie-ին մեջի պարունակությունն ամբողջությամբ ընդունվի՝ գոհացուցիչ է ան: Ժողովականներն ալ միևնույն կարծիքը կհայտնեն: Անիկա պակաս է, քան այն, զոր ես ձեռք պիտի բերեի. մասնավորապես լիազորություն չի կա: Փույթ չէ, այս է մեր ճակատագիրը: Որոշվեցավ, որ ձևի համար անգոհացուցիչ նկատենք և այս՝ գրավոր կերպով: Բայց բերանացի հայտնենք, որ կզիջենք, եթե նոր փոփոխության չենթարկվի: Որոշվեցավ, որ վարդգես, ես և վահան խմբագրենք թուղթը: Նիստը վերջացավ, տուն եկանք: Մինակա խմբագրեցի թուղթը, ընկերներուս կարծիքին համաձայն քանի մը կետեր փոխեցի: Կարոն ալ ներկա է: Մինչև ժամը 2 տեսց:

Առավոտյան, ուրբաթ, տեսակցություն Մանտելսթամի հետ (էջ 45):

¹ Գրուման ամբարձրակր տե՛ս էջ 50:

² Պատճեն:

<21.> <ՇԱՐԱԹ> 1, <ԴԵԿՏ. 28> 10 ՀՈՒՆՎԱՐ, 1914:

Հինգշաբթի գումարվեցանք², Պատրիարքը բացակա է: Շատ մը պարապ խոսքերու փոխանակություն: Հայկ. դատին վիճակը ժանրացած է: Հանկարծ Պատրիարքին նամակը³ տանող բարապանը դարձավ: Դեսպանը հետաձգել է մեկնումը: Ուրեմն Հայկ. դատին վրա պիտի պնդե, ուրեմն նոր հրահանգներ ստացելու <է> Բեթրպուրկեն: Նոր հույս մը կը ծագի մեր որտեղուն մեջ: Ամեն բան կը մոռնամ: Կը խնդակցինք և նիստը կը դադարեցնենք՝ առնվելի ստույգ լուրերուն համեմատ ի հարկեն նորեն գումարվելու համար (էջ 46):

¹ Ինքնագրում նշված է՝ Կիրակի, որ վրիպում է: Նոր տոմարով 1914-ի հունվարի 10-ը չարաթ է, ինչը երևում է նաև հաջորդ գրառումից:

² Այս գումարումը եռել է Ապահովության նիստից անկախ:

³ Տե՛ս էջ 21 գրառումը:

<25.> ՇԱՐԱԹ ԵՐԵՎԱՆ <ԴԵԿՏ. 28>, 10 ՀՈՒՆՎԱՐ 1914 (Ը.<ստ> Ե.<ՎՐՈՊԱՆՎՈՅ>

Պ. Մանտելսթամ ունի լուր չի բերել մեզի: Ի՞նչ եղավ իբրև թե թուրքաց կողմն առաջարկվելիք բարենորոգումներու ծրագիրը կհասկցվի արդեն, ինչպես կասկածելի է, թե ատոնք Թուրքիո կողմն պատրաստ և ավարտված չեն:

Դեսպանը վաղը կմեկնի¹: Եկան ինն խնդրելու, որ Պատրիարքի կողմն ողջերթի համար ղեկավարություն խրկվելիք պատվիրակությանը ո՞ր ժամուն ընդունելիքը ղեկավարեն հարցնին: Խնդրեցին նաև, որ Պատրիարքի կողմն ղեկավարին ողջերթի համար գրվելիք մտերմական նամակի մը պատճենը գրի առնեմ:

Սիրտս նեղ է: Մեր խնդիրը արդեն գոհացուցիչ լուծման մը հանգած պիտի ըլլար այս պահուս արդեն, եթե մեր անձուկ մտքերուն ճնշումովը թուրքաց մոտ մեր աշխատութիւնները դադրեցուցած չըլլայինք: Ահա վասիկ դեսպանը կմեկնի՝ առանց ոչինչ ձեռք բերած ըլլալու: Ո՞րի հասկցնեմ սրտիս ցավը: Ամեն առթիւ դառնորեն կհայտնեմ Ապահովութեան հանձնախմբին և Դաշնակցութեան գործած սխալին մեծութիւնը: Խնչ օգուտ, եղածը եղավ: Հիմա գործոված վնասին չափը և տարածութիւնը հասկնալն զատ ուրիշ ոչինչ մնաց ընելիք: Խոնարհինք սա կատարված իրողութեան առջև, զոր բոլոր ջանքիս հակառակ չի կրցա արգիլել (քանիբորդ անգամն է աս սա հինգ տարվան մեջ): Մեծ հաջողութիւն մը միայն ասոնց հետ հաշտութիւն և բարեկամութիւն, գրեթե զինակցութիւն — ահա այս մեկ հաջողութիւնը, զոր կրնամ արձանագրել և զոր ամենաբուռն պայքարն մը վերջը ձեռք բերի, հոն ալ individuel² պատասխանատվութիւն ստանձնելով, հակառակ տիրող հոսանքներուն, խոսելով Զարիքովին հետ, համոզելով զինքը այն աստիճան, որ ան ալ ռուս շրջանակները, մեծ ու փոքր, համոզն և մեզի վերադարձնե զանոնք:

Այդ միջոցին դաշնակցականները ատելի ցարին դեմ կմղին իրենց սաստիկ պայքարը: Իմ խրատներս չէին արգիլել զանոնք, բայց կսկսին արդեն մտածել: Ես այդ միջոցին (1 ա.) նորեն ազգ. շահերը իմ գիտցած կերպովս վարելու ամբաստանութեան տակ էի ոմանց կողմն: Ուրիշներ սակայն իրենց սրտին խորեն ինծի համամիտ էին, բայց չէին համարձակել արտահայտվիլ: Տիրող հոսանքները:

Հայկ. դատին ճակատագիրը միշտ քու ձեռքդ մնաց, ո՞վ խուժանավարութիւն: Հիմա այդ անցյալին կվերադառնամ մտքովս: Այն ատեն հաստատամտութիւն և արիութիւն ցույց տվի: Այս անգամ՝ ոչ: Հազար անգամ ափսոս, չի կրցա: Պատրիարք, Քաղաքական ժողովո ատենապետ, դաշնակցականները և մութին մեջ գործող նախանձաբեկ հոգիներ միարանեցան չքացման գործին շուրջը: Դիմադրութիւնը կարելի չէր և չեղավ: Տեղի տվի՝ սրտիս մեջ պահելով արցունքներս: Թուրքաց թշնամացա, ինչպես մեր մեծ դիվանագետները, պահանջեցին, խզեցինք ամեն հարաբերութիւն (էջ 43):

¹ Դեսպանը դը Գիրսը քանիցս հետաձգել է Կ. Պոլսից մեկնումը:

² Անձնական:

<26.> ԿԻՐԱԿԻ <ԴԵԿՏ. 29/11 ՀՈՒՆՎԱՐ, 1914>

Պ. Մանտելսթամ (էջ 46):

<27.> <ԴԵԿՏ. 31> 13 <ՀՈՒՆՎԱՐ, 1914, ԵՐԵՎԱՆԻ>

Երեքշաբթի պ. Մանտելսթամ վայրկենի մը մեզի հանդիպել է իմ տունը չի գտնված մեկ ժամուս, ըսելու համար երկու օրեն պատասխան՝ պիտի ստացվի: Պ. Մանտելսթամ թիվը հայտնապես կը պահե կամ ինք... (էջ 46):

¹ Խոսքը կայանալիք համաձայնութեան շուրջ Պետերբուրգից սպասվող պաշտոնական պատասխանի մասին է:

² Գրառումը կիսատ է թողել:

<28.> 1/14 ՀՈՒՆՎԱՐ <1914, ՉՈՐԵՔՇԱՐՔԻ>

Լուր չի կա դեպքանատներն (էջ 45):

<29.> <1> 14 <ՀՈՒՆՎԱՐ, 1914, ՉՈՐԵՔՇԱՐՔԻ>

Կաղանդի իրիկուն Ակնունի և Կարո մեր տունն են: Կարոն մտահոգ է: Հասկցվեցավ թերթերն, որ դեպքանին ճամբորդության հետաձգումը մի-միայն Հայկ. հարցին համար չէ: Գերմ. խնդիրն ալ կա՝ և թե այդ մասին դոհացում ստացեր են: Եթե այդ գոհության փոխարեն Հայկ. հարցին մեջ թեթևանան ... Պ. Մանտելսթամի թիվը պահելը նշանակալից է: Եթե այս պահուս կարենայինք մենք այլ քովնտի աշխատանքներ կատարել: Եվ սակայն մենք հարարերություն խզեցինք խուժանավարության գոհացում պատճառելու համար: Ամենն կենսական 48 ժամերուն մէջ թեքներն ծալած սպասելու դատապարտված ենք: Ահա ինչ որ <ին> Պատրիարքը, Աստուծոյ. հանձ., Կաշակցությունը և սրիկաները: Այս վիճակը caractére² դառավ: Ամենքը իրենց խաղ<ը> կխաղան կոր: Այս վայրկենին մեկ (1 ա.) մեջ ենք: Կարոն գործված սխալը կխոստովանի (էջ 45):

1 Խոսքը դերմանական դիվորական մարմնի մասին է, որ Կ. Պոլիս էր ժամանել 1913-ականների 1/14-ին՝ հինգ տարի ժամկետով խորքական բասակում բարձր պաշտոններ զբաղեցնելու համար: Դա անանդատացրել է Անտանտի երկրներին և ամենից շատ՝ Ռուսաստանին:

2 Բնավորություն, հատկություն:

<30.> 2/15 ՀՈՒՆՎԱՐ, <1914>, <ՀՆԴՇԱՐՔԻ>1

Առտուն Կարոն հանդիպեր է <դեպքանատուն>: Լուր չի կա:

Այսօր Մանտելսթամի պիտի գար: Չեկավ: Իրիկունը վահանը եկավ ինձման լուր առնելու: Լուր չի կա, որ տամ: Գեշ նշան. լրագիրները նոր զիջումներու լուրը կուտան: Գրեթե անդարմանելի է (1 ա.): Կարծվեցավ, որ ռուս դեպքանր միմիայն հայոց համար իր մեկնումը հետաձգեց: Մենք միշտ տասնիկ կմտածենք և կբացատրենք դեպքերը. տիեզերքը ամբողջ հայ խընդրույն համար կանցնի, կշարժի: Լավատեսությունը ամբարտավանության հասնելը հայոց տրված է: Հիմա ճշմարտությունը կհասկցվի. հայ խընդրույն քով՝ Լիման փաշային խնդիրն ալ կա: Ատիկա Ռուսիո փափագին համաձայն լուծվեցավ²: Հավանական է (հաշային հարցին օրինակը) մեր պահանջներու ղեղչումի փոխարինությունը: Ատոր համար Մանտելսթամ երես շունի ինծի գալու: Մեր մեջ անոնք, որ մասնակից եղան իմ գործունեության համար գալու: Գարուցանելու, կզգան գործված սխալին մեծությունը, բայց կլռին: Ինչո՞ւ ինծի իրավունք տան, իսկ անդին մյուս դավադիրները: Անոնց սչինչ փուլթն է:

Հայկ. խնդիրը ճարտարությամբ վարելն վերջը, վերջին պահուն մեր նոր անմիաբանությամբ և գործած սխալներով մեծ կորուստ մը կրեցինք: Հայկ. խնդիրը իր եզրակացության մոտեցած է: Այսուհետև ժամանակը և դեպքերը պիտի սրբագրեն զայն հօգուտ մեզի (էջ 45):

1 Ինքնագրում՝ շտրեֆաբրի:

2 Օտտո Լիման Ֆոն Զանգերս (1855—1929) — գերմանական հեծելազորային գեներալ, Թուրքիա ուղարկված զինվորական պատվիրակության (տե՛ս № 29 գրառման 2-րդ ծանոթագրությունը) ղեկավար: Թուրքիայում նրան շնորհվել է փառալի տիտղոս և մարշալի կոչում, նշանակել են Առաջին բանակի հրամանատար: Բեռլինում ոռոս-գերմանական բանակցությունների և Բ. Դանից ռազատություններ պահանջելուց հետո Ռուսաստանին հավաստիքներ տրվեցին, որ Լիման փառան կլինի միայն ռազմական խորհրդի անդամ և զինվորական վարժարանների ընդհանուր քննիչ:

<31.> 4/17 ՀՈՒՆՎԱՐ, 1914, ՇԱՐԱՍ

Առտու կանուխ վահանը եկավ տունս: Քիչ վերջը՝ Կարոն: Վահանը առչի իրիկուն պ. Մանտելսթամը գացեր գտեր էր դեսպանատան մեջ, Քանի օր է թարգմանը իրեն <հեռու> կպահ մենն: <Վահանը> գիտնալով հանգեծ, որ թարգմանը պիտի տժգոհի՝ գացեր է զինքը բռնելու: Այս հեղափոխական միջոցը օգուտ մը չէ ունեցեր: Մանտելսթամ նախ բավական ծանր ակնարկություն մը ըրած է այս հետապնդումին դեմ. «Արդյոք հայերը այնչափ հառաչ կերթա՞ն, որ դեսպանատան արամենները՝ controller² ընելու բավականությունը ունին», — ըսեր է: Մեր մոտ չի գալու պատճառը հայտնի է. որոշ լուր չունի, որ բերն մեզի: Վահանը պարապ դարձած է ուրեմն:

Կարոյին ոտնաձայնը մեր սանդուխներուն վրա կճանչնամ գրեթե. Զանգակը կզարնվի. ներս կխուժե, քան թե կմտնե. վերելքն. կարմրած երեսը կճառագայթե հաղթական ձևով. ձեռքը գրպանը կտանի հրովարտակ մը հանելու ձևով. երեք էջ ֆրանսերեն թուղթ մըն է, իրատե³ մը որպես, որուն վրա համաձայնություն գոյացեր է դեսպանին և Դուան միջև⁴, բացի մեկ կետե, կարևոր կետե մը: Առավոտյան Մանտելսթամ զինքը կանչեր և հանձնե՞ր է՝ խնդրելով, որ զայն մեզի բերե և մեր կարծիքը, վերջնական կարծիքը գրավոր հասցնե իրեն մինչև ժամը 3. այդ ժամուն դեսպանը Դուաը պիտի երթա եպարքոսը տեսնելու և կուզե հայոց մտածումը գիտնալ, ըստ այնմ խոսելու համար հոն:

Կարոն երջանիկ է. ուրախութենն աչքերը կվառին. միգուցե հայկական ինքնավարություն բերն մեզի: Աչքե կանցնիմ թուղթը. ծանոթ բաներ են բոլորը, իմ դիտած convention-ը⁵ հիմը կկազմե անոր, այն զորս տանդուլունիի դատեր էին ի սկզբման մեր հայրենասերները ... կիրակի գիշերվան հուշակավոր ժողովին մեջ⁶, Իհարկե այդ օրեն մինչև այսօր գաղափարները փոխված էին: Ամենքը գրեթե կխոստովանեին գործված սխալը, նույնիսկ կխնդրեին, որ խալիլ պեյի հետ խոսիմ, բայց ականջ չի կախեցի այս հեղհեղուկ մարդոց և զգուշ կեցա: Այս դիրքս ալ ավելի խոր կերպով ազդեց վրանին. ամեն լուրե և հաղորդակցութենն զուրկ մնացին և ճանչցան, թե ինչ մեծ սխալ է թեքը ծալած նստիլ և traître⁷ չընել: Հարցումներ ընելը, եթե ուրիշ ունէ արդյունք չունենա, միայն իբրե լուր առնելու միջոց բավական է: Ո՞րի հասկցնել այս բաները: Մաքուր միտքեր ու սիրտեր կան շուրջս հարկավ, բայց դիվանագիտական ճարտարությանց և նրբությանց ընդունակ՝ ոչ ոք: Դեպքերը կուզան հետզհետե անագորություն կերպով մը արգարացնել իմ տեսություններուս ուղիղ ըլլալը: Հիմա ալ ավելի déférence-ով⁸ մտիկ կընեն խոսքերուս:

Պետք է ուրեմն մինչև ժամը 3 Պատրիարքարանը իր կարծիքը ատ: Վահանը կվազի Ապահովության հանձնաժողովը ստիպողաբար գումարելու Պատրիարքարանին մեջ ժամը 1-ին: Կարոն կարծիքս կհարցնե: Proprement⁹

կքնեմ. կես առ կեսի խնդիրը միայն կիսով միայն լուծված է. թուրքերը կընդունեն զայն վանի և Պիթլիսի համար, մնացածը համեմատականի կազմեն: Պաշտենից մասին՝ ոչինչ: Կրթական մասն ալ, զոր դեռսպանը ընդամենը է արդեն, ոչինչ չի նշանակեր: Իմ կարծիքս է խնդրել, որ չափան կես առ կեսի խնդիրը քիչիկ մը ես améliorer¹⁰ ընել որչափ որ հնար է, պաշտենից համար միայն կեսը մտցնել, իսկ gouvernement-ի¹¹ և (1 ա. ֆր.) համար անպատճառ ալ սկզբունքը ապահովել, կրթական խնդրույն մեջ տուրքերու համեմատական բաժին ուզել, համիտիեններուն ընդհ. բանակին մեջ մտցվելը խնդրել: Այսչափ Կարոն համամիտ է ինծի: Իսկույն կխմբագրեմ դեռպանատան մատուցվելիք թուղթը, որպես <գի>, եթե ժողովքն ընդունի, պատրաստ ըլլա և ժամանակին հասցենեն: Թուղթը գրպանս դրած, Կարոյին հետ ճամբա կենեմ: Իսկ հասկցնեմ իրեն, փորձություններես օգտված, որ այս պատրաստ թուղթն երևան չի պիտի հանեմ ժողովքին մեջ, ոչ ալ ունէ կարծիք մը պիտի հայտնեմ սկիզբն: Եթե ալ մեղքը գործեմ, ամենքը պիտի դիմադրին, նույնիսկ վաճանք: Վերջին ժամուն իմ կարծիքս պիտի տամ և թուղթն ալ իրեւ թե հոն գրի պիտի առնեմ: Ընկերներս բոլորն ալ, բացի խորհրդարանական հանձնախմբի անդամներեն (Շահրիկ, Խոճասարյան¹² և Տեր Մովսիսյան) ազնիւ մարդիկ են, բայց իրենց հոգեկան վիճակը այս դժուարություններուն դեռ պատրաստ չէ:

Այդպէս ալ կատարվեցավ: Ժողովքին մեջ թող տվի որ խոսին, հոգնին: Լեւոնքը կապշին, որ բառ մը չեմ ըսեր: Վերջապես իմ կարծիքս կուզեն: Կհայտնեմ զայն: Կընդունվի: Կխնդրեն, որ գրի առնեմ դեռպանին տրվելիք թուղթը: Թուղթն սենյակը կառանձնանամ: Քիչ հետո առտվին պատրաստ թուղթ կներկայացնեմ իրենց: Պատրիարքը կուզէ էրդրումի համար կես առ կես առ լուծել: Հայտնելով հանդերձ, որ չի պիտի հաջողինք, «Շատ լավ» կըսեմ: Լեւոնն ոք իր մտածութեանց մեջ թաղված է: Ժողովականները սխալ բան չընելու վախին տակ են: Վաճան Փափաղյան դիտել կուտա, որ նիստի համար օրինավոր թիվ չէ գոյացած, Պատրիարքն իր պատասխանատվութեան տակ այս թուղթը պիտի խրկէ ուրեմն, քանի որ ստիպողական է: Խուժանավարությունն այն աստիճան է, որ խեղճ մարդը կվարանի, վերջապես կհամոզվի: Կարոն պիտի տանի թուղթը: Ժամը 3-են քառորդ պակաս է: Թերեւս դեռսպանը Դուռը գացած ըլլա. այն ատեն պետք չէ, որ ալ թուղթը հանձնվի: Կանոնավոր նիստով որոշում կուտանք: Միայն ստիպողականութեան տուրքն սոցն սպաստանատվութիւնն ստանձնեմ է խեղճ մարդը: Անցած օրվան զավագրութեան հեղինակներեն կվախնա: Ատոնք բոլորն ալ բացակա են, րացակա եղած են և բացակա պիտի մնան, երբոր աշխատութիւն կա կատարվելիք: Բայց իրենց ստորերկրյա և անմիտ նենգութիւնները պիտի շարունակեն: Երբ «պատասխանատվութիւն» բառը բերն բերան կելեն,

1 Առկարտեմենտ, շքանշակ:

2 Հսկել:

3 Հրովարտակ:

4 իշխալ վարչապետը տե՛ս Հայաստան..., էջ 320—322:

5 Համաձայնագիր:

6 Տե՛ս ՁԽ 4—6 գրառումները:

7 Քննարկել:

8 Հարգանք:

9 Ըոտ Լուսյան, հիմնավորապես:

10 Բարելավել:

11 Վարչութիւն:

12 Խոճասարյան Հայկ—Ազգային ժողովի «Կեդրոնի խմբակցութեան» երեսփոխան, որակավար գործիչ, 1913-ի սեպտեմբերից Ապահովութեան հանձնաժողովի անդամ:

կարծես Պատրիարքին ուսերը <կ> կթին այս բեռին ծանրության տակ։
Նս կծիծաղեմ այս բաներուն վրա։

Իրիկուն ժամը 8-ին դեսպանը պ. Մանտելսթամը ինծի ուղարկեց. կարծիքս կհարցնե ձեռք բերած արդյունքի մասին (էջ 59—60)։

<32.> <ՀՈՒՆՎԱՐ> 22/4 ֆետրվար, 1914, ՋՈՐԵՖՇԱՌԹԻ

Առտուն տեսություն պ. Անտրե Շերատամի¹ հետ։ Ցորեկը ճաշ դեսպանատանը պ. Կուլքեի², պ. Մանտելսթամ և Շերատամ։

Ցորեկն եկավ Բեթրպուրկեն հեռագիր, որ հրահանգ կուտա պնդելու, հակառակ դեսպանատան՝ լմնցնելու թախանձանքին, հետևյալ 3 կետերուն վրա.

1. 1/2 էրզրումի³։

2. Գաղթականներուն մուտքին⁴ արգելք Հայաստանի մեջ։

3. Էնճյումեններուն⁵ մեջ քրիստոնեից մասնակցության ապահովություն փոքրամասնություն նկատվող 7 վիլայիթներուն մեջ՝ հարբերդ, Տիարբերդ, Սըվադ։

Այսօր իսկ պիտի հեռաձայնեմ <այնե> պ. Կուլքեի (էջ 3)։

¹ Հավանաբար ուսական դեսպանատան աշխատակից։

² Գուլքեի Կ. Ն.—Կ. Պոլսում ուսական դեսպանատան խորհրդական։

³ Խոսքը էրզրումի նահանգում ընտրովի պաշտոնյաների հավասարության սկզբունքի մասին է։

⁴ Բ. Դուռը Բալկանյան պատերազմների հետևանքով Ռումելիից (Բալկանյան թերակղզու թուրքական նահանգները) գաղթած մահմեդականներին մտադրվել էր բնակեցնել հայաբնակ նահանգներում։

⁵ Նահանգային հանձնաժողովներ։

<33.> <ՀՈՒՆՎԱՐ> 23/5 <ՓԵՏՐՎԱՐ, 1914>, ՀԻՆԻՇԱՌԹԻ

Պ. Կուլքեի Դոնեն ստացավ հետևյալ արդյունքը, զոր հաղորդեց Բեթրպուրկի.

1 Մերժում։

2 Հաճություն և խոստում բերանացի։

3 Ընդունելություն (էջ 3)։

<34.> <ՀՈՒՆՎԱՐ>, 24/6 <ՓԵՏՐՎԱՐ, 1914>, ՈՒՐԱԹ ԶՈՐԵԿ

Դեռ հեռագիր չկա։ Վարչությունը ընտրական խնդրոց առջև չփոթված։ Համերաշխական մարմինը բանակցություն կարգիլ։ Այս հրամանը կարձակի ալ «Բաղձանք» արտահայտության ձևով։ Հայտնի է, որ նույնիսկ եթե Հայկ. հարցի բանակցությունները վերջանան, նույնիսկ ընտրություններու խնդիրը կարգադրվի, թուրքաց <հետ> մեր հարաբերությունները չի պիտի բարվոքին։ Նրեսանց թերևս իրոք մնան։ Պիտի տուժե բարենորոգմանց

գործելու նույնիսկ ընդհ. թնիչներ elections-ին¹ խնդրույն մեջ ամենամեծ շնորհակալության պատիվներով Ուրի կրսես, ու՜վ կլսես Հայրենասիրությունը ահուրդի մեջ է կուսակցությանց մեջ և համերաշխական ժողովն ալ մեծ տոնավաճառ մը, ուր ահուրդները տեղի կունենան: Այն դաշնակցականներն իսկ, որոնք ամենեն դժվար խոսք հասկցողներն էին, հիմա շփվելով քաղաքականության հետ, ճամբա եկած են, օրինակ Վահան Փափագյան, կընդունի որ (2 ա. ֆր.) չլուս, կգլխակցվի օր օրի, կզգան վտանգը, զոր 10 օրն ի վեր կհայտնեն և զոր ինչ վերջը Փաշան ալ երկու անգամ հեռագրով signaler² որով: Օգուտ չընեմ: Երեւակայացեք վիճակը իրապես ողբալի հայկ. գործին՝ այս mentalité-ներով³ կառավարված (էջ 3—4):

¹ Ընտրություններ:

² նշել:

³ Մտածողություն:

<35.> <ՀՈՒՆՎԱՐ> 25/7 ՓԵՏՐՎԱՐ, <1914>, ՇԱՐԱԹ ԶՈՐԵԿ

Բեթրպուրկեն հեռագիր չի կա: Զավրիեֆեն հեռագիր մը¹, որ կըսես թե ահապարելու չենք: Կվախնամ, որ անիկա Բեթրպուրկի ձեռքը գործիք դարձած չըլլա: Այս իրիկուն ժամը 6 աղջիկ² պ. Մանտելսթամը տեսավ. հեռագիր չէ եկած, բայց անիկա լավատես է (կերևի թե հաստատական վերջացնելու հրահանգ ստանալու ձևով հոսկե հեռագրված է Բեթրպուրկի): Ժամը 7-ին Փափագյան տեսավ զինքը: Ոչինչ (էջ 4—5):

¹ Զավրիե Գևորգի որդի էր մեկնել բանակցելու Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություն Մերձավոր Արևելքի դեմանի պետ, իշխան Տրուբեցկոյի հետ:

² Ակնարկել է իր ավագ դստերը՝ Դուրես-Նվարդին (ամուսնական ազգանվամբ՝ Լիպման), որ մտերմիկ հարաբերությունների մեջ է եղել Մանդելշտամի հետ:

<36.> <ՀՈՒՆՎԱՐ> 26/8 ՓԵՏՐ. <1914>, ԿԻՐԱԿԻ ԱՌՏՈՒ

Պատմական օրն է այս: Փափագյանը եկավ Մանտելսթամի քովեն: Բեթրպուրկեն հեռագիր եկած է. (1 ա. ֆր.) ընելու վրա էի, հաստատական ըլլալու է: Ուրեմն թերևս այսօր իսկ համաձայնությունը պիտի pronocer¹ ըլլա: Շնորհակալության հեռագիրը և նամակները, որ սլատրաստած եմ և բովս պահած 9 օրն ի վեր, վերջապես ահա պետք կըլլան:

Վահանը կկարծես, որ նույնիսկ անոնց մեջ շատ վերասլահություններ մտցնելու ենք: Թեև ինքը ատոր հակառակին համոզված՝ խուժանավարությամբ կվախնա: Շահրիկ-խոճասարյան intriguen-ներն² իրավցնես ինչ (2 ա. ֆր.) արձանագործ մը ներշնչելու բավական <են>: Անդին բոլոր հայ հուսագրողները տժգոհ երևնալու ջանքեր կընեն: Հեռագիրները աչքի կանցնիմ: Արդեն ապագայի պահանջումներին ամենուն մեջն ալ զետեղած <են> շատ զանազան ձևերով: Ի՞նչ կուզեն ավելի՝ չեմ հասկնար: Պե՞տք կար այս

¹ Կայացնել:

² Հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը ստորագրել են Գուլկինը և Սալիկ փաշան 1914-ի հունվարի 26 (փետրվարի 8)-ին: Պայմանագիրը տես Հայաստան..., էջ 339—341:

³ խաղաղության:

ուրախ օրն այդ շար ու վհուկի հոգիներու խարդավանքներուն համար տրամադինքս կարևոր է, որ հաջողինք որ վարչությունը հրաժարական տա: Պաշտոնը լմնացավ, վտանգը անցուցինք (էջ 5—6):

⁴ Քաղաքական ժողովի վարչությունը հրաժարական է տվել 1914-ի հունվարի 31 (փետրվարի 19)-ին:

<37.> <ՀՈՒՆՎԱՐ> 27/9 ՓԵՏՐ. <1914>. ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԱՌՏՈՒ

Առտու կանուխ լրագիրները աչքի կանցունեմ: Երեկ Բ. Դուռը գոց էր Մեվլուտի տոնին¹ առթիվ: (1 ա. ֆր.)-ի գործողություն չէր կրնար կատարվել: Օսմ. գործ. <ակալությունը> կգրե միայն, թե համաձայնությունը դուրսացուցած է Ռուսիո և Թուրքիո մեջ: Ուրեմն, գոնե բերանացի, երեկ համաձայնությունը իմաց տրվեցավ: Այսօր, ժամը 2, ամեն ինչ կատարյալ է: Միայն inspecteur-ին խնդիրը կա. խիստ կարևոր, ալ քաշվեցավ:

Ասկե վերջը թող ուրիշներ աշխատին: Վերջին ըրածս իրավագետ խորհրդականներ հաստատելու առաջարկն է²: Տեսնենք, ան ալ սլիտի թաղվի՞ արդյոք: Մոռցա, ա. Չարիքոֆին գրվելիք երկու նամակ կա: Մին՝ Պատրիարքեն, մեկն ալ՝ անձնական: Վսաղը մնաց ատ: Ալ ծուլություն եկավ: (1 ա. ֆր.) պետքը դադրելուն հետ ասանկ կըլլա (էջ 6):

¹ Մարգարեի ծննդյան տոնը:

² Ազգային ժողովի 1914-ի հունվարի 24 (փետրվարի 4)-ի նիստում Զոհրապը առաջարկել էր զավառներում պաշտոնավարող հոգևոր առաջնորդներին առընթեր նշանակել օրենսգետ-խորհրդականներ «մեզի հանդեպ գործված զեղծումների դեմ» պայքարելու համար:

<38.> 27 ՓԵՏՐ./12 ՄԱՐՏ, 1914, ՀՆԳՇԱՐԹԻ

Ինչ որ նախատեսած էի, հեզհետե իրականանալու վրա է աղետալի ճշտությունամբ մը. Թուրքաց հետ մեր հարաբերությունները վատթարացած են, մեր մեջ անիշխանությունն ու անկարգությունն ավելցած են:

Կուսակցությանց և կուսակցականներու (ռամկավարներն ալ մեջը ըլլալով) պատասխանատվությունները խիստ մեծ են այս խառնակ կացության ստեղծվելուն մեջ:

Պայքարը իր վնասները տալու վրա է հայ առևտրական կյանքին, ու արգիլելու կարող չենք: Անդին ամենամեծ մտահոգությունը Inspecteur générale-ներու ընտրությանց մեջ <է>, և եթե մեր հարաբերությունները շտկված ըլլային Թուրքաց հետ, իմ որոշած ժամուս ընտրությունը մեր կամքովը պիտի ըլլար: Եվ հետո Inspecteur générale-ներու հրահանգներու խնդիրը կա: Այդ ալ Թուրքաց հետ խորհրդակցությամբ և համերաշխությամբ պիտի լուծեինք հօգուտ մեզի: Ատոր ալ հնար չի կա այսօր և կողմնակի միջոցներու ապաստանելու պարտավորած ենք:

Մեկ կողմն քանի մը նախանձաբեկ հոգիներու, Շահրիկ, Տեր Մովսիսյան, Խոճասարյանի պես ողորմելիներու ստորերկրյա դավերը և մյուսն՝ կուսակցականներու համառությունները, քաղաքական tact-ի անգիտակցության

Հետ միացած: Ահա մեր այսօրվան դժվարութեանց պատճառները: Այս երկուքը զիրար ամբողջացուցած են: Ազգը կտուժե՛ն այս բոլորին հետեանքն:

Այլ այսուհետեւ կարգիլնմ ինքզինքնիս լիրբերն և ազնիւ, բայց ան խաւարարածնեմ կազմված ժողովներու մէջ ոտք դնել:

Հայկական բարենորոգումներէ համաձայնագրի ստորագրումից հետո Զահրաաի փորձել 1 ֆանէլ բանակցութեանն էր փախաւոր. մտաւանշել նպատակ կամ խանգարիչ դարձնէր: Պահպանվել է երեք հատված, որոնցից մեկը հաղավաճեց և մտավոր ճշորտութեամբ հրատարակել է «Նախիւն»՝ զիտելով պատերազմական ամբաստանի մի օրագրում (1914, օգոստոս 4/17) մաս: Անկախ այն բանից, թէ ե՞րբ են շարադրված նախեր, տիրեալաւ և, որ վերաբերում են Բարենորոգումներին և պարտականում են ուղարկել փաստեր ու մեկնութեանն: և, ուստի դրանք հրատարակում ենք ամբողջութեամբ (էջ 28):

<39.> <ՆՈՅԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

<Ա>

Ոմանք կկարծեն թէ այդ միջոցին, ուր թուրքերը մեր մոտ դիմումներն ինչ րազմապատկեցին, արդեն որոշած էին տեղի տալ: Կարծիքը սխալ է լոյրորովին և ոչ մեկ փաստ կրնա ցույց տրվիլ այս մասին:

Ուղարկելի թէ այդ կատարված դիմումներուն մեջ թուրք բանագնացները ոչ մեկ զիջում չըրին վեճի նյութ եղած կետին վրա (պետութեանց միջամտութիւնը conseiller-ին ընտրութեան մեջ): Եթէ իրոք որոշած էին այս կետին վրա զիջում ընել, եթէ այդ բանագնացներուն խոսքերն ալ այդ մտքով էր, չէ՛ մի որ ատոնք մեր տրամադրութիւնները շոշափելով և մեր անխախտ մնալու տեսնելով ալ պատրաստ էին իրենց զիջելու տրամադրութիւններն ցույց տալ: Արդ անոնք ոչ միայն զիջում չըրին, այլ հայտարարեցին որ մինչև վերջը պիտի համառ մնային:

Ապացուց, որ մինչև վերջին վայրկյանը զիջումը սպասված էր նույնիսկ պ. Մանտելսթամի ցույց տված մտահոգութիւնն էր: Ան էր որ իմ կարծիքս կուղեր հասկնալ և կհարցնէր ինձի, թէ արդո՞ր թուրքերը պիտի դիմեին: Այս խոսակցութեան ներկա էր Կարո, և այնքան անստույգ էր այդ զիջումը, որ շատ անգամներ հարցուցեր էր անիկա ինձի, թէ հայերն ի՞նչ պիտի ընեն, եթէ հակառակ Ռուսիո ջանքերուն, այս անգամ ալ Հայկ. հարցին լուծումը հետաձգվեր: Պիտի համակերպեին: Ես այս հարցումը կվերադարձնեի և կըսեի թէ հայերը կուզեն գիտնալ, թէ Ռուսիա ի՞նչ պիտի ընեն այս հետաձգումին. պիտի համակերպե՞ն, որ կնշանակեր, թէ զմեզ lâcher¹ պիտի ընէր: Թարգմանը չէր պատասխաներ ասոր:

Եվ ինչ որ ավելի ևս կհաստատե, թէ Ռուսիա երբեք համոզված չէր, թէ Թուրքիա պիտի cède² ընէ. այն մտահոգութիւնն է, զոր ցույց տվավ դեսպանատունը նույնիսկ այս զիջումը պաշտոնապես ստանալի հետո միմիայն սա պատճառով, որ հինգշաբթի կամ ուրբաթ (1—2 փետրվար, 1914, ը. ե.) օրվան համար կնքվիլը խոստացված նոթից սևագրութիւնը մինչև ուրբաթ ցորեկ արված չէր³: Պ. Մանտելսթամ կհարցնէր Կարոյի, թէ միգուցէ թուրքերը վերջին վայրկյանին ետ կենան իրենց զիջումն, թերևս Կղզիներու առթիւ⁴ պատերազմի մը նախատեսութեամբ և դարձյալ կկրկնէր, թէ եթէ Հայկ. հարցը հետաձգվեր, ի՞նչ դիրք պիտի բռնէին հայերը:

Կտեսնվի ուրեմն, իրողութեանց հակառակ է ենթադրելը, թէ դեկտեմբերի վերջերը (ը. ե.) թուրքերը զիջման եկած էին: Ծիշտ է, որ անոնք լուծումը փութացնելու կողմ էին, բայց ընտրութեան մեջ պետութեանց միջամտութիւնը հետաճնելու պայմանով: Ուրեմն ներելի է հետեցնել, թէ ետիկ պիտի հետ տեսութիւնս⁵ այս զիջումը երևան բերելու մեջ կարևոր դեր մը խաղացած է: Եվ եթէ ավելցնենք, որ մտածված ձևը համարժեք է

նույնիսկ ռուսական առաջարկությանը մեջ գտնված ձևին, եթե ավելցնենք նաև, որ այս զիջումով ստացվեցավ նաև որ Inspecteur générale-ը վերադարձվի փոխանակ conseiller-ի և այն կաղ և անգործադրելի statut⁶ գործադրելի և տրամաբանական ձև մը ստանա, եթե ավելացնենք, վերջապես, որ միևնույն զիջումով ստանձնեցավ լիազորությունը Inspecteur générale-ի մեկ բառով՝ ինչ որ ամեն (1 ա.) հոգին կկազմե բարենորոգման գործին, ամեն արդարախոհ անձ կհարկադրվի ճանշնալ, որ խալիլ պեյի հետ խոսակցությունը մեր փափագաց լուծումը ձեռք բերելու համար կատարված աշխատությանը մեջ ամենն կարևոր և ամենն դրական և շոշափելի օգուտները տվող երևույթն էր։ Գլխավորը և Հայկական խնդրույն մեջ Գերմանիո և Ռուսիո մեջ մեր ջանքով հաստատված մերձեցման համաձայնության չափ մեծ հաջողություն մըն է (էջ 49)։

<Բ>

Անդին թուրք մամուլը հարձակողական և սպառնալից կդառնար։ «Թասինը» և «Թասֆիրի էֆթյարը» և թուրքիո ի սպաս եղող ֆրանսերեն լեզվով հրատարակվող մամուլն ալ անպատկառ կերպով conseiller-ի անվանումին մեջ ունէ օտար միջամտության անընդունելի լինելը կպաշտպանեն։ Հրեաներուն «Jeune Turc»-ը իր այս աղտոտ campagne-ին⁷ մեջ մյուսները կգեղազանցեն։

Այնպես որ ամբողջական ձախողանքի մը հեռանկարը կուրվագծվեր հարկավ հեռուն և կպարտադրեր զմեզ այս աղետալի հավանականությունն ալ աչքե բոլորովին հեռու չի պահելու։ Ես ընկերներուս հետ այս նյութին վրա կխոսեի, վասնզի ամեն կովի մեջ նահանջը մտածելու է։ Ասիկա մաս մը կկազմե կովի աշխատությանց, մանավանդ մի կովին մեջ, որ ազդր տեսակ <մը> պատանդ է այն կառավարության ձեռքը, որուն դեմ կկրուվենք։ Մեր ետևը 1895 և 1909 ջարդերը ունենին։ Ազգին գործը տանող պատասխանատու մարմինը մանավանդ այս կետին մեջ սխալ գործելու չէր։ Վախ կար, որ Հայկ. դատը թերևս լուծվան մեջ պիտի իյնար նորեն։ Այս ժանր հուսախաբությունը բոլորովին դառնացնելով զմեզ, պետության և իսլամներուն հետ մեր հարաբերությունները ավելի պիտի լարվեն։ Պետությունն ալ շատ դյուրավ հիմարություններ և խստություններ ի գործ պիտի դնե (էջ 67)։

<Գ>

...Հետևական խնդրին մեջ Պատրիարքարանի թաղերին մեզի ես տրվելու կոպիտ գրության մը մեջ ներփակված և մեր կողմն խիստ բողոքով մը այդ թագրերին Մեծ եպարքոսին վերադարձնելը⁸ այդ խուլ պայքարին արտահայտություններն էին։

Ռուս դեսպանատունը, մեր միակ ապավենը, ան ալ թեև հուլիս փափագող պատվավոր կերպով դուրս ելլելու այս գործին մեջն, այսինքն՝ որոշ չափով առավելություն մը ձեռք բերելով մեզի համար, շատ անգոր կթվեր¹⁰։ Այդ օրերուն մեջն իսկ ռուս կառավարության արժանապատվությունը վիրավորող գործի մը մեջ—Գավագը Մուսթաֆայի խնդիրը¹¹ — անիկա ձևական գոհացում մը ստանալով բավականացեր էր։ Ատկե անմիջապես վերջն է, որ գերման զինվորական պատվիրակության խնդիրը երևան եկավ¹²։ Ռուսիա, դիտողություն ընելով հանդերձ, շատ հուզում ցույց չի տվավ։ Վրդովումը այն ատեն ավելցավ, երբ Ֆրանսա ալ զայն նկատեց գերմանական նոր առավելակշռություն մը և պ. Քլեմանսոյի¹³ ի գործ դրած թրքասեր քաղաքականության դեմ շառաչալից ապտակ մը։ Ֆրանսա և Ռուսիա միացան և թուրքիո երդում չի տալու խնդիրը նորեն երևան եկավ։ Անդին արաբական դժգոհությունն¹⁴ ալ նշանակալից երևույթներու ծագում տվավ։ Պառայի մեջ շեյխերու գումարումին լուրը¹⁵ շարժում մը կհայտնե, ոչ

այն չափազանցված լուրերու մեջ ըսվածին չափ թեև Թուրքերը շփոթության մատնվեցան իրենք, Ընտրության խնդրույն մեջ մեր համառությունն ալ դիմենք մտածել տվալ: Ահա այս բոլորը միանալով նոր ձեռնարկներ սկսան մեր մոտ: Պատրիարքարանին դիմեցի, ասոնք սակայն զիջումի <պատրաստ չեղան>: Նուպար փաշան միայն ձեռնհաս եղավ: Ես այդ ձեռնարկին առթիվ ուսա դեսպանատանը նորեն նեղը դրեր էի՝ հասկնալու համար, թե ի՞նչ պիտի ընե, եթե մերժումի առջև գտնվի: Իրոք այդ մերժումը դրեթե կար: Դեսպանատունեն քաջալերիչ պատասխան մը չէի կրցած առնել: Բացի տարտամ խոսքերե, զոր շատ լսեր էի: Մեր ուրիշ պատվիրակն ալ ուսա դինվորական կցորդին հետ տեսակցելով, կյմանար անկե, որ ուսանելու ուժ զինվորական շարժում ընելու ոչ մտադիր էին, ոչ ալ ի վիճակի: Պ. Եվանվուրի¹⁶ ազդարարումները նուպար փաշան կհաստատեր: Ժիշտ այս պահուն թուրքերն ալ մեր մոտ իրենց դիմումները բազմապատկեցին: Մեծ եպարքոսը զինվորական Զեքի պեյը խրկեց Դաշնակցությանց, առանց սակայն ոչ մեկ զիջում ընելու հիմնական կետին վրա, այն է՝ conseiller-ի անվանումին պետությանց հանձնարարությամբը կամ ուժե մեկ միջամտությանմբը:

Նազլիայի¹⁷ նախարար Ճեմալ պեյը¹⁸ Վարդգեսին հետ խոսեցավ՝ անդրդիմելի մնալով այս մասին և սպառնալիքներ ընելով ի հարկին հայերը յայդդու: Նույն միջոցին է, որ իսլիկ պեյն ալ առտու մը անակնկալ կերպով ինձի եկավ, միևնույն տրամադրություններով՝ բացի սպառնալիքներեն: Անիկա բոլոր Իթթիհատեն սա formule¹⁹ կրերեք, թե ուժե ձևով պետությանց միջամտությունը ընդունելե Հայկական խնդրո մեջ թուրքերը նախամեծար կըսեսոյին մեռնի, ընդունելով հանդերձ որ երկիրն ալ միասին պիտի մեռնե: Ասիկա ամբողջ Թուրքիո համար և իրենց կուսակցության համար prestige մը, մահու և կենաց հավասար prestige-ի մը խնդիր կնկատեին: Եվ իսլիկ պեյ եկած <էր> ինձի գերագույն և վերջին ձեռնարկ մը ընելու իմ քովս թուրքերու և հայոց մեջ խզումը պատերազմե վերածելե առաջ:

Պիտի ուզեի, որ այդ վայրկյանին ուրիշ մը իմ տեղս գտնվեր, ուրիշ մը՝ իր պատասխանատվության գիտակցությունը ունեցող մը, մեր վիճակին բոլոր վհատեցուցիչ մանրամասնությունները գիտցող մը, տեսնող մը, աչքով տեսածի պես, այն մոտավոր անխուսափելի բախումը, որ հայ և թուրք տարրերուն մեջ պիտի պատահեր Հայկ. դատին վերջնական ձախողանքով: Ասիկա ուսական շահերուն ձեռնտու էր: Ձեռնտու էր արդյոք մեզի՞ ալ: Ես վստահ եմ, որ այդ ուրիշը պիտի տկարանար: Ես զորացա, ատունկ գերագույն վայրկյաններուն մեջ միայն կատարված ճիգով մը վեր բարձրացա, ձախողանքեն վեր, ազգիս սպառնացող վտանգեն վեր, հուսահատ ճիգ մը բոլոր մտախին կարողությանցս: Ինչ ըսի, ինչ պատասխանեցի, չեմ գիտեր, Սա գիտեմ, որ հաջողեցա զինքը զիջել տալու այն կետին վրա, որ մեր դատին հիմնաքարն էր և որուն դեմ անսասան կեցեր էին: Այն, որ զիս համոզելու և իմ միջնորդությունս ձեռք բերելու համար եկած էր, ես զայն համոզած ճամբու դրի և պատրաստեցի զինքը, որ իրենները համոզե և զայն համոզեցի ոչ միայն պետությանց recommandation պայմանը ընդունելու այժմեն և գրավոր կերպով conseiller-ին նշանակությանը մեջ, այլ նույնիսկ conseiller-ի ձեռք ձգելով՝ վերադառնալու եվրոպացի Inspecteur générale-ին տալով լիազորություն:

Այս ամենը ձեռք բերելու համար միակ թույլտվությունը, զոր կարելի նկատեցի, այն ալ իրե և սոսկ անձնական կարծիք, առաջին անգամվան համար Inspecteur générale-ի նշանակումի մեջ պետությանց միջամտությունը բերանացի համաձայնությամբ առնվիլ:

Այս անակնկալ ըսվելու արժանի հաջողությունը երկու վտանգի ենթակա էր ռակայն: Մին՝ թուրքաց կողմե: Իսլիկ պեյ մինչև ցայն վայր չընդունված ալ պայմաններուն համար ինքը համազվեցավ, որ <ը> չընդունեց,

որը խոսք տվավ, որ պիտի աշխատի, պիտի հաջողեր իր կողմը համոզելու: Բացահայտ էր, որ շատ մը, մեր ենթադրածեն շատ ավելի դժվարություններ ունեն հաղթելու: Թուրքաց մեջ զինվորական մաս մը ճեմալ պելի առաջնորդության տակ ամենեն ավելի ընդդիմություն կցուցներ, և Քոմիթեն այդ կողմին հակած էր: Այս էր խալիլ պեյին վախցածը, որ ասոնք, նույնիսկ ամեն հետևությունները աչք առնելով, անդդվելի մնային: Երկրորդ՝ մեր հայերուն կողմն: Հայոց մեջ համերաշխություն պահպանելու և ձեռք բերելու աշխատությունը սա հետևանքը ունեցած էր և քիչ մըն ալ ունենալու <էր>, որ ազգային ոգին մտարկած էր: Ոչ ոք մոտեն գիտեր, թե ինչեր էին Հայկական պահանջումները և ի՞նչ միջազգային պայմաններու ենթական էր: Հետո կուսակցությունները իրարու մոտ գալով, իրարմ ավելի աննկուն երևալու ախտավարակ հակումը քիչ շատ ամենուն վրա ալ տեսնված էր: Ասկե զատ այս կուսակցությունները առհասարակ հեղափոխական տարրերն էին: Աստուծո ձեռք բերվելիք արդյունքներուն utilitaire²⁰ հանգամանքները քննելու և հասկնալու քիչ տրամադիր, անդամ մը բերնե ելած, արտաքինված այս կամ այն բառին կամ ձևին կապվիլը տեսակ մը հաստատամտություն և անկե հեռանալ <ը> կորուստ և վնաս կհամարեին՝ առանց սակայն ճշտելու վնասին որակը և քանակը կամ զայն բաղդատության դնելով վերջնական ձախողանքի մը վնասին դեմ (ատեն ատեն ես իսկ այս ախտն բռնված էի: Վերջին տեսակցության մը մեջ լեզու մը գործածեցի, որուն դեմ պ. տը Կիրս պարտավորվեցավ ըսել ինձի, որ «Tout ou rien»-ի²¹ քաղաքականությունը դիվանագիտության մեջ պատվի դեմ է: Ինչ որ ալ ըլլար, ըսվելիքը ըսավ անիկա: Ատիկա հանգրվան մը պիտի ըլլա. ժամանակը զայն պիտի հառաջացնե՝ լավագույնը ձեռք բերելու փափազը հետը տանելով: Ատիկա ձեռք բերելի հրաժարելու իրավունք չունինք: Պարոն Վակենհայմ ավելի քիչն իսկ հանգրվան մը կնկատեր և միևնույն խորհուրդը կուտար):

Օրինակի համար մեր մեջ ամեն ոք միջազգային «contrôle» բառին կարողանալ էր: Ոչ ոք գիտեր ատոր ինչ ըլլալը: Իրողությունը այն էր, <որ> անիկա 6 կետերուն մեջ են պետությունները վերցուցեր էին սա տեսությունը, թե իրենք contrôle-ի իրավունքը ունեին արդեն Պերլինի 61-րդ հոդվածին²² զորությամբ, ուստի անտեղի էր այդ իրավունքը վերստին ձեռք բերելու համար առաջարկություն ընել: Իսկ ձևին գալով, դեսպանատունները իրենց հյուպատոսներուն ձեռքով պիտի կրնային զայն ի կիր արկանել: Ահա այս պատճառով contrôle 6 կետերուն մեջ չի կար, այլ կար միջազգային երաշխավորություն մը (garantie մը), որ կկայանար նախ՝ Inspecteur générale-ի անվանումին մեջ պետությանց միջամտությանը մեջ, երկրորդ՝ ատոր իրավասությանց պաշտոնին տեսչությանը և բարենորոգչական հիմերուն Բ. Դոան կողմն պետությանց պաշտոնապես հաղորդումներուն մեջ:

Ասիկա մեր շրջաններուն մեջ évident²³ ըլլալով հանդերձ, ոչ ոք contrôle բառն կհրաժարեր և garantie-ի կմոտենար: Կատարած փոփոխությունը ճանչնալը ազգասիրության կամ ազգային ջահուց վնասակար կհամարվեր:

Եվ վերջապես. ամեն ոք աչքը Հայկ. դատին մեկնակետին սկսած էր, մեկնակետ, որ գրեթե autonomie²⁴ մըն էր. մեկ հայկ. շրջան, մեկ ընդհ. ժողով, մեկ ընդհ. կառավարիչ: Ասկե մինչև հոն, ուր հասած էինք, հեռավորությունը խիստ մեծ էր, գեթ այնպես կթվեր: Ես սկիզբն մեր պատրաստած ծրագրին²⁵ կուսակից չէի, զայն ստանալու հույսը օր մը չունեցա: Են այն ատեն ընդդիմացա՝ չափազանց հառաջացալ պահանջներու դեմ հարուցվելիք դժվարությունները գուշակելով: Այն ատենն ալ կուսակցություններու հայրենասիրական պահանջումներու մեջ զիրար գերազանցելու տենչը իր դերը խաղաց: Իսկ խելքը գլուխը եղողը կընդուներ, որ անիկա ավելի մշտակա հայկ. իղձ մը կներկայացներ, քան թե իրապես ու la pratique²⁶ ձեռք բերվելիք բանը: Իսկ հիմա այդ առաջին ծրագրին կնայեր և ինչ որ ձեռք

լերեինք, անոր հետ բաղդատության կզնևր, մանավանդ մեկ շրջանի, մեկ
րնդհ. ժողովի, մեկ րնդհ. կառավարիչի մասը, զոր շտանալուն համար
սրդողելու իրավունք ունենալ կկարծենք (էջ 15—19):

1 Լրել:

2 Չիշել:

3 Թուրքական կողմի դիրքորոշման մասին տե՛ս Հայաստանը..., էջ 330—337:

4 Առաջին Բայկանյան պատերազմում կրած պարտությունից հետո Թուրքիան կորցրել
էր էլիկան ծովում իրեն պատկանող Հունական արխիպելագի կղզիներից մի քանիսը:

5 Տե՛ս № 2—3 և 11 գրառումները:

6 Կանոնադրություն, օրենք:

7 Արշավանք:

8 Թուրքական մամուլը պնդում էր, որ Հայկական հարց դրություն չունի, քանի որ արևել-
յան նահանգներում հայերը փոքրամասնություն են կազմում և բարենորոգումները պատրվակ
դարձնելով, նպատակ են դրել տապալել օսմանյան կայսրությունը՝ ստեղծելով «Տիգրան Մե-
ծի ժամանակներին» Հայաստան:

9 Օսմանյան խորհրդարանի առաջիկա ընտրությունների կապակցությամբ Պատրիարքա-
րանը 1913-ի նոյեմբերի 2-ին պահանջել էր, որ հայ երևսփոխանները ընտրվեն «ազդիս
թվին» համեմատա՝ ուղղակի հայերի կողմից: Մի քանի օր հետո դատական և կրոնից նախա-
րարությունը վերադարձրել էր հուշտդիրը որպես «օրենքին հակառակ» և համարել նման պա-
հանջը անպատշաճ: Նոյեմբերի 9-ին Պատրիարքարանը դումարելով նոր նիստ «ազգի տե-
սակետ» հատուկ պապիրակության միջոցով հանձնել էր վարչապետին, որը այն ուղար-
կել էր ներքին գործոց նախարար Թալեաթին քննելու համար:

10 Գիրսը նոյեմբերի 20-ին հատուկ նամակով Ռուսաստանի արտաքին գործերի նախա-
րարի ուղարկություն է հրավիրել ընտրությունների առիթով Պատրիարքարանի և Բ. Դոան
միջև ստեղծված հարաբերությունների վրա (տե՛ս Հայաստանը..., էջ 300—302):

11 Այս անձնավորությունը մեղադրվել է Թուրքիայի նախկին վարչապետ և ռազմական
նախարար Մահմուդ Շեքեթ փաշայի սպանությանը (1913, մայիս) մասնակցելու մեջ, փա-
խել է Հունաստան և հեռակա կարգով դատապարտվել մահվան: 1913-ի նոյեմբերի 11-ին ոս-
տիկանության տեսուչ Աղմի բելլը տեղեկանալով, որ Մուսթաֆան գտնվում է Ռուսաստան
մեկնող նավում, խաբեությունը ստացել է ռուս հյուպատոսի թույլտվությունը, ձերբակալել և
բանտում սպանել է տվել նրան: Իմանալով կեղծիքի մասին, Գիրսը վճռական բողոք է հայտնել
վարչապետին, որի հետևանքով Աղմի բելլը ազատվել է պաշտոնից և հաջորդ օրը նշանակվել
Ադանայի կուռակալ:

12 Տե՛ս № 29 դրաման առաջին ծանոթագրությունը:

13 Կլեմանսո ժորժ Բենթամեն (1841—1929)—Ֆրանսիայի նախարարների խորհրդի նա-
խագահ:

14 Տե՛ս № 11 գրառման առաջին ծանոթագրությունը:

15 Ֆրանսիական թերթերը հաղորդել էին 1913-ի դեկտեմբերի սկզբին արաբ շեյխերի՝
Իսսրայում հռչակած քաղաքական անհնազանդության և անգլիական դրոշ բարձրացնելու մա-
սին:

16 Հավանաբար Կ. Պոլսում ռուսական դեսպանության ղեկավարական կցորդը:

17 Հաղորդակցության:

18 Ահմեդ Ջեմալ փաշա (1872—1922)—գեներալ, հանրային շինությանց, իսկ 1914-ի
փետրվարից՝ ծովային նախարար:

19 Բանաձև:

20 Օգտակար:

21 «Ամեն ինչ կամ ոչինչ»:

22 Նկատի ունի 1878-ի Բուխինի պայմանագիրը:

23 Բացահայտ:

24 Ինքնավարություն:

25 Խոսքը Գևորգ Ե կաթողիկոսի հանձնարարությամբ հատուկ խորհրդակցության, Պեանը-
բուրգի ու Մոսկվայի հայ մտավորականության, Նուպար փաշայի և Կ. Պոլսի հայոց պատրիար-

գարանի կազմած ծրագրերի հիման վրա «Հայկական քաղաքական պահանջարկների» այն միասնական ծրագրի (անհատական ֆապիազյան. Իմ հուշերը. հ. երկրորդ: Պետրոս, 1952, հավելված, էջ 543—563) մասին է, որ նախկին պատրիարք Հովհաննես Արշարունին. Ստ. Գարայանը և Զոհրապը 1913-ի ապրիլի սկզբին ներկայացրել էին ոսմանական դեսպանին (նույն տեղում, էջ 230):

26 Գործնականորեն:

ДНЕВНИКИ ГРИГОРА ЗОХРАБА ОБ АРМЯНСКИХ РЕФОРМАХ (1912—1914 гг.).

Доктор филол. наук А. С. ШАРУРЯН

Резюме

В публикации представлены дневниковые записи выдающегося армянского писателя, правоведа, общественного деятеля, депутата османского парламента Григора Зохраба (1861—1915). Они в основном не датированы или имеют «таинственные» пометы («Ночь субботы», «Заседание во вторник», «Что надо сказать туркам», «13» и др.). Выяснено, что эти дневниковые записи относятся к армянским реформам 1912—1914 годов и содержат интересные сведения о встречах и беседах Г. Зохраба с политическими деятелями партии младотурок, с председателем Государственного совета Халил-беем, министром внутренних дел Талиатом, министром финансов Джа-вид-беем, а также с русскими послами в Турции Чарыковым, Гирсом, с драгоманом посольства Мандельштамом об участии Г. Зохраба в различных официальных совеща- ниях и собраниях.